

26. 656

336

U-22



Am 824

05 JAN 2010

Մ. Ա. Զ. Ա. Բ. Խ

342/128

1931 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ ՈՐԵՆՔԸ—
ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ.— 1931 թ. միապյուղիարկի
որենին անցկացնելու կարգը

Handwritten signature

Քարդմ. Հ. Բողդ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՑԱՐԱՆԶՈՒԹՅՈՒՆ
Մոսկվա 1931—VII Ռուսոպ. Դոն

336

18.02.2014

26.656

Ա-29 ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱՆԿԶՈՒԹՅՈՒՆ

ՈՌՍՏՈՎԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյև. — Սոցիալիստական շինարարության նոր եռագլ 6 է.
2. Կուսակց. — Կուսակցի կոլեկտիվի թշնամի 5 է.
3. Դյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 է.
4. Սաալին. — Պատասխան ընկեր կոլեկտիվներին 5 է.
5. Մ. Դիգոյան. — Կոլեկտիվների մասին 6 է.
6. Վ. Բովանով. — Նոր եռագլ 5 է.
7. Դյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 է.
8. Կուսակց. — Կոլեկտիվում 8 է.
9. Ա. Անդրեյև. — Հյուս. Կովկ. դյուղատնտեսության սոցիալիստական խնդիրները 2 է.
10. Կալմին. — Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը կոլեկտիվում 8 է.
11. Ս. Անդր. — Սոցիալիստական շինարարության դրուստ 8 է.
12. Հյուս. Կովկ. Յերկը. — Ժախտաբեր ծախսի միջոցների գիտություն 2 է.
13. Հ. (Բ) Կենտրոնի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի ղեկավարումը) 15 է.
14. Ս. Հովհաննիսյան. — Երգ մարտական փորձի (քանադական ծովափում) 20 է.
15. Հյուս. Կովկ. յերկրային 6 կուսակցական կենտրոնների լուսնաձևերը 8 է.
16. Զարգացրեք կենդանարկությունը կոլեկտիվում 3 է.
17. Յեղիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 է.
18. Միկուլա. — Դեպի նոր կենցաղը կոլեկտիվում 5 է.
19. Սիմոնով. — Պաշտպանեցեք անասուններին վարակումից 5 է.
20. Դուգովսկի. — Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին 6 է.
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնորհ 16 է.
22. Դյուղատնտեսական միասնական հարկը և դ. ա. զոյ. վերա կառուցումը 10 է.
23. Ա. Բ. Մեդվեդևսկի. — Հասցանախնդիր բերքահավաքը և կալը 3 է.
24. Միկուլա. — Բանջարանոցային կուլտուրաների խնամքը 3 է.
25. Պ. Մ. Շառուն. — Արտադրական խորհրդակցությունները կոլեկտիվում 12 է.
26. Ս. Դ. Բառանցյան. — Անասնաբուժական կոլեկտիվ և նրա մասնաճյուղերի կառավարումը 20 է.
27. Ս. Մեդարդ. — Խորհուրդների վերընտրությունների հիմնական խնդիրները 7 է.
28. Խորհուրդների վերընտրությունների գործնական խնդիրները 8 է.
29. Ամբաստանի խորհուրդները (պրիսոն) 10 է.
30. Ուստինով. — Կուլտուրային վերացումը և խորհուրդները 7 է.


H Apr.

2-3281a

Մ. Ա. Ջ. Ա. Բ. Կ.

2-3231a Au 824

1931 Թ. ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ ՈՐԵՆՔԸ—
ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ



ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԿՈՐՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՈՒՄ Ե ԻՐ ՀՆԳԱՄՅԱԿԸ


Բանվոր դասակարգը, բոլորիկների ղեկավարությամբ և լենինյան քաղաքականության ճիշտ ըմբռնումով, ձեռք բերեց մեծագույն աճում իր անտեսության մեջ:

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում, ստեղծված անախընթաց կրիզիսի պատճառով, փակվում են հարյուրավոր և հազարավոր գործարաններ և ֆաբրիկներ, Խորհրդային Միությունն աշխատանքի յե հանում սոցիալիստական արդյունաբերության նորանոր վիթխարի գիգանտներ:

Մեր հնգամյակի անդրանիկները, ինչպես Ստալին-գրադի արակտորային գործարանը, Ռոստովի Սելմաշը, Թուրքսիբը և հարյուրավոր ուրիշ խոշոր գործարաններ և ֆաբրիկներ, արդեն աշխատում են:

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում յերկարաց-

21045



նում են առանց այն ել արդեն յերկարատե բանվորական որը և փողոց են շարժում տասնյակ միլիոնավոր բանվորներ, խորհրդային Միութիւնը իսպառ վերացրել է գործազրկութիւնը և արդյունաբերութեան մեծագույն մասում մտցրել է յոթժամյա աշխատանքային օր:

Անասելի արագութեամբ, թե Յեվրոպայում և թե Ամերիկայում չտեսնված տեմպերով, միայն բոլշևիկների հատուկ թափով, իրականանում է ինդուստրիայի նորանոր գիգանտների կառուցումը:

Ընթացիկ տարում աշխատանքի պիտի անցնեն 518 հազար նոր և խոշորագույն ձեռնարկութիւններ՝ զինված ժամանակակից տեխնիկայի վերջին նորութիւններով: Դրանց թվին են պատկանում խորհրդային ինդուստրիայի այնպիսի հսկաներն, ինչպես խորհրդային տրակտորային գործարանը, վորը տարեկան 50 հազար տրակտոր է տալու Ուկրաինայի և Կենտրոնական Սևահողային մարզի սովխոզային և կոլխոզային դաշտերին և Սարատովի կոմբայնի գործարանը, վորը տարեկան 20 հազար կոմբայն է տալու Ստորին և Միջին Վոլգայի հացահատիկային ռայոններին: Հնգամյակի յերրորդ, վճռական տարում աշխատանքի պիտի անցնեն Մագնիտոգորսկ գործարանի 2 հալոցները, վորոնք իրենց ուժով գերազանց են աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր հալոցներից (բավական է ասել, վոր Մագնիտոգորսկի ելեկտրոկայանը 2 և կես անգամ Վոլխովստրոյից ուժեղ է լինելու): Նմանապես աշխատանքի յեն անցնելու Նիժնեգորոգսկի ավտոմոբիլային գործարանը՝ տարեկան 140 հազար ապրանքատար և կիսաապրանքատար մեքենաների արտադրական ծրագրով, Բերեզնիկովի քիմիական կոմբինատը, վորը տալու յե 300 հազար փ. պարարտանյութ գյուղատնտեսութեան համար և սոցիալիստական արդյունաբերութեան մի շարք ուրիշ խոշորագույն գիգանտներ:

ՀԵՏԱՄՆԱՅ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՈՒԿՆՈՒՅՎՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ

Մեր աջողութիւններն ավելի նշանավոր են նմանապես գյուղատնտեսութեան բնագավառում: Խորհրդային Միութեան Հրավոր-միջակ գյուղացիական տնտեսութիւնների կեսից ավելին արդեն վոտք են կոխել կոլեկտիվ աշխատանքի ուղին՝ ուժեղ թափով կոլխոզներ մտնելով: Կոլխոզնիկներն այսուհետե կազմում են գյուղում խորհրդային իշխանութեան և պրոլետարական դիկտատուրայի հիմնական և գլխավոր հենարանը: Միլիոնավոր աշխատավորական գյուղացի տնտեսութիւններ, բռնելով նրանց կողմից արդեն ստուգված և գնահատված կոլխոզային ուղին, վճռական պայքարի յեն մտել կոլեկտիվացման ամենակատաղի թշնամու— կուլակի հետ, վոչնչացնելով նրան վորպես դասակարգ՝ հարատարած կոլեկտիվացման հիման վրա:

Կուսակցութեան լենինյան ուղիղ քաղաքականութեան շնորհիվ ապահովված է կոլխոզների այնպիսի բուռն աճում և մեքենա-տրակտորային կայանների այնպիսի լայնածավալ զարգացում, վոր հնգամյա պլանի բոլոր տեխնիկներն արդեն գերազանցված են:

Մեքենա-տրակտորային կայանների հսկայական աճումն առանձնապես բնորոշ է հնգամյակի 3-րդ, վճռական տարվա համար: 1930 թվին գործող 360 հազար մեքենա-տրակտորային կայանի փոխարեն, 1931 թվին կազմակերպվելու յեն 1040 մեքենա-տրակտորային նոր կայաններ: Հետևաբար 1931 թվին պիտի գործեն ընդամենը 1400 հազար մեքենա-տրակտորային կայաններ: Նույն 1931 թ. ընթացքում գյուղատնտեսութիւնը պիտի ստանա 120 հազար տրակտոր:

Սոցիալիստական յերկրագործության այս առաջընթաց ջոկատը ներկա տարում կցանի 18 միլիոն հեկտար տարածություն:

Կոլխոզներին համընթաց ստեղծվում են հատիկավոր, կենդանաբուծական և յուղա-կաթնային խորհրդային խոշոր տնտեսություններ (սովխոզներ), վորոնք աշխարհիս յերեսին ամենախոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններն են հանդիսանում: Կենդանաբուծական սովխոզների զարգացման պլանով, վորը հավանություն և դառած խորհրդների 6-րդ համագումարի կողմից, նախատեսված և մինչև 1931 թվի վերջը «Սկոտովոդի» յեղջյուրավոր կենդանիների թիվը հասցնել 2 միլիոն 8 հարյուր հազարի, իսկ «Ուկցեվոդինը» — 4 միլիոն գլուխ վոչխարի: Սովխոզները — խոշոր գյուղատնտեսական արտադրության այդ ֆաբրիկաները — ընթացիկ տարում պետությանը պարտական են տալու մինչև 200 միլիոն փութ հատիկավոր մշակույթ, 6 և կես միլիոն փութ միս, 600—700 հազար փութ յուղ, 230 միլիոն փութ ձալնդեղ և այլն:

Մեր սոցիալիստական շինարարության խոշոր աջողությունները թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության բնագավառներում խոստովանում են վոչ միայն մեր բարեկամները, այդ աջողությունները չեն ժխտվում, այլ խոստովանվում են նաև խորհրդային իշխանության ամենայն շրջանում և ամենակատարի թշնամիների կողմից: Մեր աջողություններն այնքան նշանավոր են, վոր մենք արդեն ընդհուպ մոտեցել ենք լուծելու այն խնդիրը, վոր ԽՍՀՄ խորհուրդների 6-րդ համագումարը զբեղ և մեր առաջ, այն է՝ այս տասնամյակի ընթացքում անպատճառ հասնել առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկա-եկոնոմիկական կողմից և անցնել նրանցից: «Մենք

սլանում ենք դեպի սոցիալիզմը ինդուստրացման ուղիով՝ վաղ անցնելով մեր դարավոր «Ռուսաստանի» («россейской») հետամնացությունից» (Ս տ ա լ ի ն):

ՄԵՐ ՅԵՐԿՐԱՄԱՍԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՄԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍ Ե

Առանձնապես մեծ են բուլեիկյան պայքարի աջողությունները կոլեկտիվացման ճակատում մեր Հյուսիսային Կովկասյան յերկրամասում: Ամբողջ յերկրամասում կոլխոզ մտնող աշխատանքային գյուղացիական տնտեսությունների թիվը հասնում և 82,1 տոկոսի, իսկ համատարած կոլեկտիվացման ռայոններում — 87,3 տոկոսի: Մեր յերկրամասը հիմնականում կատարել — վերջացրել և համատարած կոլեկտիվացումը և դրա հիման վրա աջողապես վերացնելու վրա յե կուլակությանը՝ վորպես դասակարգի: Մեր յերկրամասի համարյա բոլոր ռայոնները զարնախացան սկսեցին վորպես համատարած կոլխոզներ: Այս աջողությունները մենք ունեցանք մեր կուսակցության տարած ուղիղ գծի շնորհիվ, բանվոր դասակարգի հերոսական պայքարի շնորհիվ, աշխատանքի սոցիալիստական նոր մեթոդների շնորհիվ, այսինքն՝ սոցմրցման, հարվածայնության, միջանցիկ բրիգադների, հանդիպական պլանների և այլն:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶՐՋԱՆՈՒՄ

Տնտեսական և կուլտուրական սոցիալիստական հոյա-կապ շինարարությունն ընդգրկել և նաև Հյուսիսային Կովկասի ազգային մարզերն ու ռայոնները: Մեր յերկրամասի տերրիտորիայի վրա ապրում են 100-ից ավելի ազգություններ: Դրանցից ամեն մեկն ունի յուրահատուկ տնտեսական

նիստ ու կաց, ունի իր լեզուն, իր սովորութիւններն ու իր կուլտուրան: Ռուսական ցարիզմի կողմից դարեր շարունակ ճնշված լեռնեցիներն այսօր արագորին կառուցում են իրենց սոցիալիստական տնտեսութիւնն ու իրենց սոցիալիստական կուլտուրան: Ամբողջ Միութեան հետ միասին նրանք մասնակցում են սոցիալիզմի հոյակապ կառուցումին: Տեղական աշխատավոր բնակչութիւնն ինքն է իր մայրենի լեզվով զարգացնում և ամրացնում իր կուլտուր - սոցիալական և հասարակական - քաղաքական կազմակերպութիւններն ու ձեռնարկութիւնները, ինչպես՝ դպրոցներ, ակումբներ, ընթերցարաններ, խուտորներ, գատարաններ և այլն:

Հյուսիսային Կովկասի ազգային մարզերի և ռայոնների գյուղատնտեսութիւնն աճում և ամրանում է սոցիալիստական նոր հիմունքներով: Ազգային մարզերի ցանքի տարածութեան աճումը գերազանց է, քան ամբողջ յերկրամասի ցանքային տարածութեան աճման տեմպը: 1927 թվին ազգային մարզերի ցանքային տարածութիւնը կազմում էր յերկրամասի ցանքային տարածութեան 6,9 տոկոսը, իսկ 1931 թվին—7,8 տոկոսը, հասնելով մինչպատերազմյան ցանքային տարածութեան 129 տոկոսին, մինչդեռ ամբողջ յերկրամասը հասել է մինչպատերազմյան ցանքային տարածութեան 103,5 տոկոսին:

Ցուցանշական է և այն, վոր այս տարի առնից առաջ զարնանացանը վերջացրին Հյուսիսային Ոսեթիայի, Կարաբաղինո-Բակարիայի, Ադիգեյի և Չերքեզիայի մարզերը, մի հանդամանք, վոր կարող է հիշյալ մարզերի գյուղատնտեսութեան բուռն աճման լավագույն հավաստիքը լինել:

Հենված չքավորներին, դաշն կտպած միջակի հետ

Ինտական պայքար մղելով կուլակի դեմ, կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը հասան այն բանին, վոր աշխատավոր լեռնեցիների հիմնական մասան քանի դնում ավելի լայնորեն վտար է դնում իր գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ուղին: Ադիգեյը և Հյուսիսային Ոսեթիան առաջինն ավարտեցին համատարած կուլեկտիվացումը և կոլխոզներում ունեն 98-99 տոկ. կուլեկտիվացրած տնտեսութիւններ: Ազգային բոլոր մարզերում կուլեկտիվացրած տնտեսութիւնները կազմում են 57,4 տոկ., վոր գերազանցում է ամբողջ Միութեան կուլեկտիվացրած տնտեսութիւնների տոկոսը: Ազգային մարզերի և ռայոնների դաշտերում գործում են 13 հատ մեքենա-տրակտորային կայաններ, միջին հաշվով 9133 ուժանոց, վորոնք մշակում են 455,074 հեկտար:

Նշանավոր է նաև արդյունաբերութեան աճումը մեր յերկրամասի ազգային մարզերում և ռայոններում: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը վերջ դրեց ազգային ծայրագավառների ավարին ու ավերին: Յեթե ցարական կառավարութիւնը թույլ չէր տալիս տեղում ազգային արդյունաբերութեան զարգացումը, վորպեսզի դրանով իր կապիտալիստների համար ապահոված լինի վաճառման շուկա և եւ ժանազին հումուլթ հայթայթե կենտրոնական արդյունաբերութեան, խորհրդային իշխանութիւնը բոլոր ազգային մարզերումն էլ ամեն կերպ զարգացնում է տեղական արդյունաբերութիւնը:

Կառուցված են մի շարք խոշորագույն ձեռնարկութիւններ, ինչպես՝ ձվաթռչնային ֆաբրիկա Կարաբաղյում, 3,200,000 ուլբի արժողութեամբ, պահածոյի (կոնսերվի) գործարան Ինգուշեթիայում, 1,600.000 ուլբի արժողութեամբ, պոտաշի և մսաթմաթի գործարաններ Չեր-

քեզական մարզում, 3 միլիոն ուսուցիչ արժողությամբ և ուրիշ գործարաններ, ինչպես՝ կրթի, աղյուսի, ձեթի և յեզիպտացորենի ջրաղացներ և այլն: Ձեռնարկված և Գիզելդոնյան և Բաքսանյան հուժկու ելեկտրոկայանների կառուցմանը, վորի որիյենտիր արժեքն հասնում և 39 միլիոն ուսուցիչ արժողության: Իրագործվում և բոլշեիկյան հիմնական սկզբունքներից մեկն, այն և՛ ազգային մարզերի համակողմանի եկոնոմիկական զարգացումը, ինդուստրացումը, նրանց արդյունարերական աշխուժացումը և այդպիսով ըստեղծվում են անհրաժեշտ քաղաքական-տնտեսական պայմաններ, վորոնց շնորհիվ ազգային մարզերի կուլտուր-քաղաքական բարգավաճումը զրվում և լայն և հաստատուն բաղայի վրա: Խորհրդային Միության կերտած ազգային քաղաքականությունը սրբում—հանում և ցարական այն անիծված կնիքը, վոր ազգային տնտեսական ու կուլտուրական անհավասարության և ճնշման ցուցանիշն էր կազմում:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ԲՅՈՒՋԵՑԻ ԱՃՈՒՄԸ

Կուլտուրական հետամնացությունը, զրադիտության ստոր մակարդակը, սանիտարական ծայր աստիճանի անբավարար վիճակն, ազգային վորակյալ կաղերի բացակայությունը պայմանավորել են, վոր ազգային մարզերի բյուջեները կազմելիս տարեցտարի ավելի մեծ չափով հատկացումներ արվեն՝ նրանց սոցիալական — կուլտուրական պետքերի համար:

Ազգային մարզերի համար կազմված բյուջեյի ծավալը վերջին տարիները չափազանց մեծացել և և իր տեմպերով յերկրամասի բյուջեյի աճումից առաջ և անցել: Բյուջեն, վոր 1924-25 թ. կազմում էր 6.983.000 ուսուցիչ, 1929-30

թվին հասավ 28.819.000 ուսուցիչ, տալով այդ տարիների համար 316 տոկ. աճում յերկրամասի բյուջեյի աճման 204 տոկոսի դիմաց:

Այս ժամանակաշրջանում ողնության (դոտացիայի) չափը բարձրացավ 1.312.000 ուսուցիչ մինչև 6.374.000 ուսուցիչ: Սրա հետևանքով ազգային մարզերի բյուջեյի տեսակարար կշիռը յերկրամասում 11,7 տոկոսից բարձրացավ 15,8 տոկոսի:

Ազգային մարզերում սոցիալ-կուլտուրական պետքերի համար սահմանված ծախսերը կատարվում են ավելի ուժեղացրած տեմպերով, քան թե ամբողջ յերկրամասում: Ազգային մարզերում 1929 թ. ծախսված և ժողովրդական լուսավորության, առողջապահության, կաղերի սրտարաստման, աշխատանքի պահպանման և սոցիալական ապահովության համար 16.448.000 ուսուցիչ, կամ փաստորեն կատարված ծախսերի 49,3 տոկոսը, մինչդեռ յերկրամասում հիշյալ ծախսերը կազմում են բոլոր ծախսերի ընդհանուր գումարի 33,1 տոկոսը:

Սոցիալական-կուլտուրական պետքերի համար ծախսված գումարներն անշեղ կերպով աճում են և տարեցտարի նրանց տեսակարար կշիռը բյուջեյում բարձրանում է: Ժողովրդական լուսավորության համար 1929-30 թ. ծախսված էր 10.896.000 ուսուցիչ, կամ փաստորեն կատարված ծախսերի ամբողջ գումարի 33,1 տոկոսը, 1928-29 թ. 7.544.000 ուսուցիչ կամ 28,1 տոկոսի դիմաց:

Ժողովրդական լուսավորության համար սահմանված ծախսերի մեծանալու հետևանքով ստացվում և ծախսերի անշեղ աճումն ըստ շնչի բնակչության, ընդ վորում այս ծախսը բարձր և միջին յերկրամասայինից:

ԾԱՆՍԵՆ ԸՍՏ ՇՆՁԻ

Տարիներ	Յերկրամասում	Ազգային մարզերում
1927-28	3 ա. 46 կ.	4 ա. 60 կ.
1928-29	4 ա. 36 կ.	6 ա. 09 կ.
1929-30	5 ա. 93 կ.	8 ա. 78 կ.
1931 (կոնտ.թվ.)	9 ա. 73 կ.	13 ա. 68 կ.

Մեծաքանակ ներդրումները ժողովրդական լուսավորության գործում հնարավորություն տվին ընդհուպ մոտենալ անգրագիտության վերացմանը և ընդհանուր պարտադիր ուսման մուծմանը բոլոր ազգային մարզերում և ռալոններում:

Մոտավորապես նույն պատկերն ունի նաև առողջապահության գիծը: Մինչևեղափոխական ժամանակաշրջանը բնորոշվում է բժշկա-սանիտարական սպասարկման համարյա իսպառ բացակայությամբ: Ներկայումս ազգային մարզերում և ռալոններում զգալիորեն աճում է հիվանդանոցների, ամբուլատորիաների, մալարիական կայանների, տուբդիսպանսերների, վեներական դիսպանսերների, մալուրության և մանկության պահպանության ցանցերի թիվը: Ազգային մարզերում հիվանդանոցներն ավելի յեն ապահովված մահիճներով (կոյկաներով), քան յերկրամասի հիվանդանոցները: Մինչդեռ յերկրամասում 622 հոգուն հասանելի յեն հիվանդանոցային մեկ մահիճ (կոյկա), ազգային մարզերում մեկ մահիճը 505 հոգու համար է: Բնակչության մեկ շնչի համար 1931 թ. ծրագրված է ծախսել առողջապահական գծով միայն տեղական բյուջեյով 4 ա. 25 կ., յերկրամասում ծախսվելիք 3 ա. 04 կ. դիմաց:

ԽՈՂՈՐ ԶԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Ե ՄԵԾ ՄԻՋՈՑՆԵՐ

Յերկրի ինդուստրացման իրագործումը, գյուղատնտեսության նոր հիմունքներով կառուցումը, բնակչության

կուլտուրական աճող պահանջներին բավարարություն տալու անհրաժեշտությունը, յերկրի պաշտպանության ամրապնդման խնդիրները պահանջում են մեծագույն միջոցներ: Ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ հընգամյակի ընթացքում կկազմեն մոտավորապես 78 միլիարդ ռուբլի, վորից 43 միլիարդը նախատեսմանված են կապիտալ ներդրումների համար՝ արդյունաբերության, տրանսպորտի և էլեկտրոֆիկացիայի մեջ, իսկ 20,6 միլիարդը գյուղատնտեսության համար:

ԴՅՈՒՂՏՆՏՃԱՐԿԸ, ՆՐԱ ՓԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՂԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կուլտուրական և տնտեսական շինարարության հետ կապված ծախսերը ծածկելու աղբյուրներից մեկը հանդիսանում են հարկերը, վորոնց թվին նաև միասնական գյուղատնտեսական հարկը:

Գյուղատնտհարկի դերը, վորպես պետական արդյունքի աղբյուրի, մեծ է: Նա ընդամենը պետական բյուջեյի մոտ 2,5 տոկոսն է կազմում: 1931 թ. գյուղատնտհարկի գումարը՝ 500 միլիոն ռուբլի՝ կազմում է միայն 10 տոկոսն այն խոշոր ներդրումների (մոտ 5 միլիարդ ռուբլի), վոր 1931 թ. ընթացքում ծախսելու յեն պետությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության համար:

Հարկի ֆինանսական կողմը լուրջ նշանակություն ունի տեղական և հատկապես գյուղական և առևտրական բյուջեյի համար. գյուղատնտհարկից ստացված բոլոր գումարներն ամբողջապես հանձնվում են տեղական վարի բյուջեյին՝ տեղական խորհուրդների տնտեսական բազան ամրացնելու համար:

Սակայն գյուղատնտհարկի գլխավոր նշանակությունը նրանումն է, վոր նա հանդիսանում է վորպես դասակար-

գային քաղաքականութեան գործիք, վոր ուղղված է գյուղատնտեսութեան կոլեկտիվացման հետագա աճմանը, դրա հիման վրա կուրակութեան՝ վորպես դասակարգի վերացմանը, գյուղատնտեսութեան բարձրացմանը՝ կենդանարուծութեան և տեխնիկական մշակույթների զարգացումը խրախուսելով և վորը, վերջապես, ուղղված է պլանային մթերումների դերն ուժեղացնելուն, ինչպես նաև ունեւոր տնտեսութեանների սպեկուլյատիվ ձգտումների դեմ պայքար մղելուն:

Այդ խնդիրներէից բղխում է նաև հարկի կառուցվածքը: ԽՍՀ Միութեանը հրատարակել է 1931 թ. համար նոր որենք միասնական գյուղատնտեսական հարկի մասին: Խորհրդային իշխանութեանն ամեն տարի այնպես է կազմում որենքը միասնական գյուղատնտեսական հարկի մասին, վոր նրա ոգնութեամբ աշակցի գյուղում ճշգրիտ կերպով աշակցելու կոմունիստական կուսակցութեան և խորհրդային իշխանութեան քաղաքականութեանը, ինչպես նաև աշակցի իրազօրեւելու այն խնդիրները, վորոնք հերթական են գյուղում ընթացիկ տարում:

ՀԱՐԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԴՐՈՒՅՔԸ ԿՈՒՍՈՋԻ ՅԵԿԱՄՏԻ ՄԻ ՌՈՒՐԼՈՒՅ

Կոլեկտիվացման աճումը և դրա կապակցութեամբ ընդհանրապես գյուղի հանգամանքները 1931 թ. գյուղատնտեսական հարկի առաջ դնում են մի շարք նոր խնդիրներ: Այս հանգամանքից դրված, որենքի մեջ մտցրին համապատասխան փոփոխումներ: Նոր որենքով պահպանվում է անցյալ տարի սահմանված կոլխոզների համեմատական հարկման սկզբունքը, այսինքն հարկման այն ձևը, յերբ հարկը հաշվվում է հավասարաչափ յեկամտի ամեն մեկ ուղբուց, անկախ անտեսութեան ընդհանուր յեկամտի չափից:

Կոմունայում և արտելում հարկման յենթակա յեկամտի ամեն մեկ ուղբուց վերցվում է 3 կոպ. հարկ, իսկ միաբանական հողամշակման ընկերութեանից— 4 կոպեկ: Հարկի այս դրույքներն անփոփոխ են մնում բոլոր կոմունաների, արտելների և միաբանական հողամշակման ընկերակցութեանների համար, այսինքն կոմունայի և արտելի հարկման յենթակա յեկամտի մեկ ուղբուց 3 կոպ., իսկ հողամշակումը միասին կատարող ընկերակցութեաններից— 4 կոպեկ, առանց հաշվի առնելու, թե այդ կոլեկտիվ տնտեսութեանները 1000 ուղբի, թե 10.000 կամ 100.000 ուղբի յեկամուտ ունեն: Անցյալ տարվա համեմատութեամբ հարկի դրույքները կոլեկտիվ տնտեսութեանների նկատմամբ պակասեցված են: Անցյալ տարի կոմունաներից հարկ վերցնում էին ելին յեկամտի մի ուղբուց 4 կոպ., իսկ արտելների և հողամշակումը միասին կատարող ընկերութեանների յեկամտից— 5 կոպ. բայց անհատականների տնտեսութեանից, ինչպես նաև կոլխոզնիկների չհամայնացրած յեկամուտներից հարկը վերցվում է պրոգրեսիվ դրույքներով, այսինքն ինչքան շատ լինի տնտեսութեան յեկամուտն, այնքան ել յեկամտի մեծագույն մասը հարկն է վերցնում: Այսպես, ուրեմն, կոլեկտիվ տնտեսութեանները հարկ վճարում են շատ ավելի պակաս, քան անհատական միջակ գյուղացին, նմանապես ավելի պակաս, քան կոլխոզնիկի չհամայնացրած յեկամտից է վերցվում:

ԿՈՒԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿՄԱՆ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅ ՀԱՂՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇՈՒՆ

Անհատական մանր տնտեսութեանների նկատմամբ գյուղատնտեսութեանից նրանց ստացած յեկամտի վորոշու-

մը հնարավոր ե կատարել միայն շահույթի նորմաներով առաջնորդվելով, վորովհետև ամեն մի տնտեսությունը յեկամոր հաշվառքն առանձնապես կատարելն անկարելի չե: Կանոնավոր հաշվառքի բացակայութեան պատճառով նույն վիճակն եր ստեղծվել նաև անցյալ տարի կոլխոզների մեծագույն մասի նկատմամբ: 1931 թվին կոլեկտիվ տնտեսությունների յեկամուտն այս ձևով վորոշելը հիմնովին հակառակ պիտի լինի կոլխոզների հաշվառքը և հաշվետվութունը կանոնավոր հիմքերի վրա դնելու խնդիրն: «Առանց հաշվառքի կոլխոզը, վորպես կազմակերպված տնտեսություն, գոյություն չունի. վորտեղ բացակայում ե հաշվառքը, այնտեղ գոյություն չունի խոշոր տնտեսությունը» (Յակովլև):

Այն հանգամանքը, վոր կոլխոզների հարկումը հնարավոր ե կատարել համաձայն նրանց հաշվետվութեան և վոչ թե շահույթի նորմաներով, ինչպես տարիներ շարունակ գործադրվում եր, վկայում ե այն մասին, վոր կոլխոզները կազմակերպչորեն բավականաչափ ամրացել են: Կոլխոզների հաշվառքի և հաշվետվութեան կանոնավոր հիմքերի վրա դնելը 1931 թվի համար վճռական խնդիր ե, հետևաբար անկանոն բան կլիներ, յեթե կոլխոզների հարկումը կատարվեր շահույթի նորմաներից յեղնելով և վոչ թե հաշվետվութեան համաձայն:

Կոլխոզներն իրենց բոլոր յեկամուտների յեվ ծախսերի հաշիվներն արձանագրում են — կոլխոզների հարկումը պետք ե կատարվի վոչ քե նորմաներով, այլ այդ արձանագրությունների համաձայն

Կոլխոզների կազմակերպչորեն ամրացումը թույլ ե տալիս ընթացիկ տարում հարկման յենթարկել նրանց վոչ թե

նորմաներով, յերբ յեկամուտը հաշվվում ե մոտավորապես, կոպիտ թվերով և անճիշտ, այլ աչքի առաջ ունենալով նրանց իսկական յեկամուտը, վոր վորոշվում ե կոլխոզի հարկման տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) համար կազմած տարեկան հաշվետվութեան համաձայն:

Շահույթի նորմաների համաձայն հարկման յենթարկելու ժամանակ ուշադրութուն չի դարձվում, թե այսքան կամ այնքան հեկտար հողի վրա ինչ ե ցանված ընթացիկ տարում, ինչքան ե այդ տարվա իսկական բերքատվութունը և այլն: Իսկ յերբ կոլխոզը հարկվում ե իր ստացած իսկական յեկամուտի համաձայն, վորի հաշիվը կատարվում ե կոլխոզի հաշվառքների մեջ արձանագրված թվերի համաձայն, դուրս ե գալիս, վոր այն կոլխոզը, վորի յեկամուտը փոքր ե յեղած, փոքր ել հարկ ե վճարում, իսկ յեթե կոլխոզը ցանել ե բարձր յեկամուտ բերող կուլտուրա և լավ բերքատվութուն ե ստացել, այդ դեպքում նրանից կարելի չե ավելի մեծ հարկ վերցնել:

Մինչեվ նոյեմբեր կոլխոզներն իրենց յեկամսի նախահաշիվներն հաշիվներն են անում, այդ իսկ ժամանակին կոլխոզները հաշվարկում յեվ վճարում են իրենց հարկերը

Ամեն մեկ կոլխոզի վարչություն, գյուղատնտեսական հարկի որենքով, նոյեմբերի մեկից վոչ ուշ, տեղական կազմակերպությունների և ֆինանսական աշխատավորների ոգնութեամբ, ինքնապուխ կազմում ե իրենից հասանելի հարկի քանակը, հիմնվելով կոլխոզային հաշվառքների, արտադրական պլանի և այլ տվյալների վրա, ապա այդ հարկը վճարում ե նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում, կամ Յերկրային Կոմիտեյի սահմանած ժամկետներում: 1932 թ. հուն-

վար ամսի ընթացքում և վոչ ուշ, քան փետրվար ամսի 1-ը
կոլխոզի վարչութիւնը, իր տարեկան հաշվետվութեան հի-
ման վրա, պետք է տեղեկութիւն ներկայացնի ռաշոնա-
կան գործադիր հանձնաժողովին՝ հարկի վերջնական հաշ-
վարկի մասին: Յեթե վերջնականապես հաշվարկված հարկի
գումարը նախապես հաշվարկվածից ավելի լինի, պակասորդ
գումարը վճարման յենթակա յե վոչ ուշ, քան փետրվարի
10-ը: Իսկ յեթե կոլխոզն ավելի գումար է հատուցած, այդ
ավելին պետք է վերադարձվի կոլխոզին՝ ընդհանուր հի-
մունքների համաձայն: Հարկի հաշվարկման և պահանջման
այս կարգը սահմանված է այն բանի կապակցութեամբ, վոր
տնտեսական տարվա վերջնական արդշունքները կարող են
պարզ լինել հարկման տարվա հաջորդի սկզբին, իսկ հար-
կային գումարները դանձված լինեն ընթացիկ տարում, վո-
րովհետեւ նրանք հարկավոր են տնտեսական և կուլտուրա-
կան շինարարութեան ծախսերի համար:

Յերկրային Գործադիր Կոմիտեն՝ հաշվի առնելով, վոր
աղգային մարզերը շատ են ցանուած քաղհանավոր մշակութ-
ներ և առանձնապես յեղիպտացորեն, հետեապես բերքա-
տվութիւնն ավելի ուշ է լինում, քան ուղեսական ռաշոննե-
րում, վորոշեց, վոր աղգային մարզերի կոլեկտիվ տնտեսու-
թիւնները, բացի Աղիգեյի մարզից, յերկրի այլ վայ-
րերի կոլխոզներից մեկ ամսով ուշ վճարեն հարկը: Այսպես,
աւտոնոմ մարզերի բոլոր կոլխոզները համար, բացի Աղի-
գեյի մարզից, հարկի հատուցման առաջին ժամկետը նշա-
նակված է 1931 թվի նոյեմբերի 1-ը (յերկրի մյուս վայրե-
րի կոլխոզների համար—1931 թ. հոկտեմբերի 1-ը), իսկ
յերկրորդ ժամկետը—1931 թ. դեկտեմբերի 1-ին (փոխա-
նակ 1931 թ. նոյեմբերի 1-ը յերկրի այլ վայրերի համար):
Ինչ վերաբերվում է Աղիգեյի ավտ. մարզի կոլեկտիվ տն-


տեսութիւններին, քանի վոր այս մարզերում բերքահավա-
քը կատարվում է ավելի շուտ, քան մյուս մարզերում, նը-
րանք հարկը վճարում են այն ժամկետներին, վորոնք սահ-
մանված են յերկրի այլ ռաշոններում դտնվող կոլխոզների
համար:

Կոլխոզում պե՛տք է կանոնավոր արվի հաշվաւոր
յե՛վ հաշվետվութիւնը: Հարկն էլ ուղիղ հաշ-
վարկված կլինի

Կոլխոզների հարկման կարգը և հարկի վճարման ժամ-
կետները գլխովին համապատասխանում են կոլխոզների
տնտեսական գործունեութեանը և բարեհաջող պայմաններ
են ստեղծում պլանային տնտեսավարութեան համար: Կոլ-
խոզների և ֆինանսական որդանների, ինչպես նաեւ խոր-
հրդային ամբողջ հասարակայնութեան առաջ դրված է մի
խնդիր, այն է՝ ամեն կերպ ոգնութեան հասնել կոլխոզին՝
նրա հաշվաւորը և հաշվետվութիւնը հարկավոր բարձրու-
թեան վրա պահելու, այլև ապահովելու համար հաշվադրե-
րի կանոնավոր վարումը, վորպեսզի հնարավոր լինի ուղիղ
դատողութիւն ունենալ կոլխոզի իրական յեկամտի չափի
մասին: Այս բանը հարկավոր է վոչ միայն հարկի հաշվարկ
ման համար, այլ և կոլխոզի բովանդակ տնտեսական գոր-
ծունեութեան համար: Առանց սրան կոլխոզն անկարող է
կանոնավոր կերպով և ժամանակին հայտաբերելու տնտե-
սական տարվա հանրագումարը և կանոնավոր կերպով բաշ-
խելու իր յեկամուտը: Գյուղատնտեսական հարկը տվյալ
դեպքում կոչված է նպաստելու, վոր կոլխոզի հաշվաւորը և
հաշվետվութիւնը դրված լինի կանոնավոր հիմքերի վրա:

Հարկվում է կոլխոզի վոչ ամբողջական
յեկամուտը

Ներկա տարում, գյուղատնտեսական հարկը նշանակե-



լիս, կոլխոզի յուրաքանչյուր ճյուղի յեկամտի և ծախսի մանրամասն հաշվարկը կատարվելու չէ։ Կոլխոզների հարկման շատ պարզ յեղանակ և սահմանված որենքով։ Հարկման յենթակա յե կոլխոզի ամբողջական յեկամուտը։ Իմանալու համար, թե վորքան և կոլխոզի ընդհանուր յեկամուտը, պետք և հաշվել, թե ինչ արժեն պետական մթերութների համար սահմանված գներով դաշտագործության, մարգագործության, բանջարագործության, այգեգործության և այլ պրոդուկտները, վոչ մի հանում չանելով ծախսերի համար։ Կոլխոզների վոչ հողագործական աշխատանքից միայն ստացված արդյունքը վորոշելու ժամանակ ուշադրության և առնվում ընդհանուր յեկամուտը՝ դուրս յեկած այն բոլոր ծախսերը, վորոնք կապված են այդ աշխատանքի կամ արտադրության հետ։

Թեև հարկման յենթակա յե ընդհանուր յեկամուտը, սակայն գյուղատնտեսական հարկի որենքով հարկումից ազատվում և կոլխոզի յեկամտի նշանավոր մասը՝ պետպես արտոնությունների կարգով։ Վերջի-վերջո հարկման յենթարկվում և կոլխոզի յեկամտի մասը միայն և վոչ ամբողջ յեկամուտը։ Այսպես, գյուղատնտեսական հարկի հաշվարկման ժամանակ կոլխոզի ընդհանուր յեկամտից դուրս են գալիս հատկացումները հետևյալ ֆոնդերի համար՝

- ա) անբաժանելի ֆոնդի համար.
- բ) հասարակական ֆոնդերի համար—կուլտուրլուսավորական, անաշխատունակների պահպանության, պարգևատրական և ապահովագրական (սերմացուլի և կերի)։
- գ) ուրիշ ֆոնդերի համար, վորոնք կարող են կազմակերպվել կոլխոզներում, ինչպես՝ հասարակական ճաշարանների կառուցման և

սարքավորման համար, մանկապարտեզների ու մուրների համար և այլն։ Բացի սրանից, կոլխոզի ընդհանուր յեկամտի մեջ չեն մտնում—

- ա) կուլակային ցանքսերի բերքատվությունից ստացված և կոլխոզների համայնացված յեկամուտը (բացի այս ցանքսերի հավաքման ծախսերից)
- բ) ապակուլակացրած տնտեսությունների կոլխոզներին հանձնված դույքը.
- գ) կոլխոզնիկների նախնական ներմուծումները, վորոնք անցնում են անբաժանելի ֆոնդին.
- դ) կոլխոզներում ստացվող դրամական և բերքային վարկերը (փոխատվություն)։

Որենքը խոսք արժույթյուններ և քալիս կոլխոզնիկներին՝ նրանց ցնեսությունը բարձրացնելու յեկ կոլեկտիվացմանն աջակցելու համար

Ինչպես և անցյալ տարի, հատուկ արտոնություններ են սահմանված հարկման յենթարկելու համար դաշտագործությունը, կենդանաբուծությունը, տեխնիկական մշակութները և գյուղատնտեսության մասնավոր ճյուղերը։ Այդ արտոնությունները նպաստելու յեն ցանքային մակարդակի հետագա ծավալմանը, կենդանաբուծության և կաթնային տնտեսության զարգացմանը, տեխնիկական մշակութների բազմացմանը, վորոնք անհրաժեշտ են արտադրության համար, հետևաբար և նպաստելու յեն արտասահմանից հումուլթների ներմուծումը դադարեցնելուն։

Յեթե ցանքսի ամբողջ մակարդակը 1930 թվականի համեմատությամբ ավելացել և, այդ ավելացած ցանքսի յե-

կամուտը հարկման չի յենթարկվում, այսինքն հարկը վերցվելու յե թե տվյալ կոլխողի և թե այս տարի կոլխող մտած անտեսությունների այն յեկամտից, վորը ստացվել և անցյալ տարվա չափով ցանված հողային տարածությունից:

Հարկումից իսպառ աղատվում են կոլխողի այն յեկամուտները, վորոնք ստացվում են կենդանաբուծությունից, թռչնաբուծությունից և մեղվաբուծությունից: Այս արտոնությունը վայելում են ազգային մարդերում նաև կենդանաբուծական ընկերակցությունները: Սրանց ամբողջ համայնացրած անասունը, վոր դոնվում և հասարակական դոմերում, գյուղատնտեսական հարկով հարկվելու չեն:

Կոլխոզները հարկ վճարելու չեն բամբակի և շաքարային ճակնդեղի ցանքաներից: Այս արտոնությամբ կոգտվին Ձեչնիայի, Խնգուշեթիայի և Կաբարդինո-Բալկարիայի ավտոմարդերի այս տարի բամբակի ցանքս ունեցող կոլխոզները:

Հարկումից աղատվում են նաև այն մակարդակները, վորոնք 1930 և 1931 թ. թ. բռնված են բանջարանոցներով, (բացի բոստանից) և ծխախոտի մշակույթներով: Հարկման յենթակա չեն նմանապես այն յեկամուտները, վորոնք ըստացվում են ապրանքային կենդանաբուծական ֆերմաներից և կերի այն յեկամուտներից, վորը կոլխոզների կողմից հանձնված և ֆերմաներին:

Այդեդործությունից, պարտիզպանությունից, բանջարանոցապահությունից և ծխախոտագործությունիպ ստացված յեկամուտները, ինչպես նաև տեխնիկական և հատուկ կուլտուրաներից՝ ուլայից, կանեփից, գենադերչակից (կըլեշնիկինա) և այլն ստացված յեկամուտները, չնայելով, վոր այդ յեկամուտները նշանավոր չափով հատիկային կուլտուրաների (ցորենի, գարու, վարսակի, յեգիպ-

տացորենի և այլն) յեկամուտներից բարձր են, բայց և այնպես հարկման ժամանակ այդ յեկամուտները կիջեցվեն տվյալ կոլխողի հատիկային կուլտուրաների յեկամուտի չափին: Սա շատ մեծ արտոնություն է: Յեթե, որինակ, կոլխոզն ունի 5 հեկտար բանջարանոց, վորը 2500 ո. յեկամուտ և բերում, իսկ նույն կոլխողի հատիկային կուլտուրայի մեկ հեկտարից ստացված միջին յեկամուտը կագումում է 50 ո., այդ դեպքում հարկման յենթարկվելու յե բանջարանոցից ստացված վոչ թե 2500 ո. յեկամուտը, այլ միայն 250 ոտըլի:

ՍԱԿԱՎԱԶՈՐ ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ՀԱՐԿԻՑ ԱՋԱՏՎՈՒՄ ԵՆ

Գյուղատնտեսական հարկի նոր որենքով՝ սակավագոր կոլխոզները հարկ վճարելուց աղատվում են: Հարկից բուլրովին աղատվում են այն կոլխոզները, վորոնց ընդհանուր յեկամուտը մարդագլուխ 60 ոտըլուց ավելի չեն: Հարկային հանձնաժողովները հարկից կարող են ազատել և, այն կոլխոզները, վորոնց յեկամուտը մարդագլուխ հասնում է 75 ոտըլու և այդ կոլխոզներն իրոք սակավագոր են:

Ջգալիորեն նվազում է հարկն այն կոլխոզներից, վորոնց մեջ մտել են չքավորները: Վոչ ամբողջապես, այլ միայն 25 տոկոսով հարկվում է յեկամուտն այն հողերի, վորոնք հանձնված են կոլխոզներին 1930 թվին՝ իբրև սակավագոր անհատականներ՝ գյուղատնտեսական հարկից աղատված նրա անդամների կողմից: Այսպես ուրեմն, յեթե անցյալ տարի, որինակի համար, կոլխող մտել են 30 չքավոր տնտեսություններ, վորոնք ունեն 40 հեկտար ցանք, այդ դեպքում հաշվարկը կատարվում է այսպես:

Ամենից առաջ պետք է հաշվել, թե այս տարի կոլխողի մեկ հեկտար հատիկային մշակույթից վորքան ընդանուր յեկամուտ է ստացվում: Յենթադրենք, վոր ստացվում է 50 ոտըլի: Բազմապատկելով այդ 50 ո. չքավորների կողմից կոլխոզին հանձնված հեկտարի քանակով, այսինքն 40-ով, մենք կգտնենք, վոր կոլխող մտնող չքավորների հողից ըս-

տացված յեկամուտը հավասար է 2000 ուրբուռ: Յեզ, ուրեմն, հարկման ժամանակ ուշադրութեան անշուտ է վոչ թե ամբողջ գումարը, այլ նրա միայն 25 տոկոսը, այսինքն հարկվելու յե վոչ թե 2000 ու, այլ միայն 500 ուրբուռ:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Որենքն արտոնութեաններ է տալիս և այն կոլխողներին, վորոնց կազմի մեջ մտնում են՝ կարմիր բանակայիններ, պատերազմի և աշխատանքի ինվալիդներ, յերբ պատկանում են ինվալիդութեան առաջին յերեք խմբակներից վորեւ մեկին, նախկին կարմիր գվարդիականներ և կարմիր պարտիզաններ, զինվորական պահպանութեան, միլիցիայի ու քրեյական խուզարկութեան մեջ ծառայողներ, այլ և ՆՍՀՄ-ի և դաշնակից հանրապետութեանների շքանշաններով պարգևատրված անձինք, աշխատանքի հերոսները, այրիները և յերեխաներն այն անձանց, վորոնք ըսպանվել են կուլակների ձեռքով՝ կուլակութեան դեմ յերույթների համար, մանկատների սաներ և վորբեր: Հարկի հաշվարկման ժամանակ կոլխողի ընդհանուր յեկամտից դուրս են դալիս յեկամտի այն մասը, վորը հասանելի յե կոլխողի վերը հիշված անդամներին:

Իրենց արտադրական պլանը կատարող յեվ գերակատարող կոլխողները գեղջ են ստանում

Գյուղատնտեսական որենքը մեծ արտոնութեաններ է տալիս այն կոլխողներին, վորոնք կատարում և գերակատարում են իրենց արտադրական պլանները: Միջին հաշվով Միութեան մեջ այդ գեղջը կազմում է 10 տոկ: Յերկրային Գործադիր Կոմիտեյին իրավունք է վերապահված գեղջի չափը բարձրացնել այն ռայոնների և մարզերի համար, վորոնց պլաններն ավելի ընդարձակ են և պլանների կա-

տարման պայմաններն ել ավելի դժվար են: Իսկ այն ռայոններում և մարզերում, ուր տնտեսավարութեան պայմաններն ավելի թեթեւ են և պլանների կատարումն առանձին դժվարութեաններ չի ներկայացնում, գեղջի տոկոսը հարկից կարող է 10 տոկոսից պակաս լինել: Սրանից յեկնելով, Յերկրային Գործադիր Կոմիտեն սահմանել է գեղջի յերեք չափ կոլխողների արտադրական պլանների կատարման համար, այսինքն՝ 7, 10 և 15 տոկ: Հաշվի առնելով, վոր Ադիգեյան, Չեչենյան և Ինգուշյան ավտոնոմ մարզերում կան մեծ տարածութեաններ այն կուլտուրաների, վորոնք պետք ունեն հատուկ խնամքի, ավելի բարդ մշակման, քաղհանի և այլն (բամբակը, սոյան, կանեփը և այլն), Յերկրագործկոմը վորոշել է այդ մարզերի կոլխողներին վերապահել հարկային գեղջի մեծագույն տոկոսը, այսինքն 15 տոկ, նրանց կողմից արտադրական պլանը կատարած կամ գերակատարած լինելու համար:

Կոլխողների հարկի չափը մեծ չե

Յերեք մեծագույն արտոնութեանների հետևանքով, վոր նոր գյուղատնտեսարկը վերապահում է կոլխողներին, վերջինների վճարած հարկի չափը մեծ չե: Լուսաբանենք այս բանը հետևյալ որինակով.

Յենթադրենք, վոր Չեչենյան ավտոնոմ մարզի Շիլինի շրջանում գոյութեւն ունի միաբան հողամշակման ընկերակցութեւն «Աշխատանքային Չեչենիա» անուանով: Այս ընկերակցութեւնը բաղկացած է 280 հոգուց, վորոնք ամբողջապես համայնացրել են թե իրենց լճկանները և թե գյուղատնտեսական ինվենտարը: 1931 թվին «Աշխատանքային Չեչենիա» ընկերակցութեւնն ունի 20 ձի, 50 յեզ, ցանել է 250 հեկտար հատիկային մշակույթ, 20 հեկտար բամբակ և

5 հեկտար բանջարանոց, ընդ վորում անցյալ տարվա համեմատութեամբ 30 հեկտար ավելի ցանք ունի: Բոլոր հատիկավոր մշակութիւններից, ինչպէս՝ ցորեն, գարի, յեղիպտացորեն և այլն ստացվել է 10 հազար ո., ընդհանուր յեկամուտ, վոր միջին թվով ամեն մեկ հեկտարից անում է 40 ուրբլի: 20 հեկտար բամբակից ստացվել է 2 հազար ո. և 5 հեկտար բանջարանոցից—1500 ո., հետևաբար ընկերակցութեան բովանդակ յեկամուտն անում է (10000 ո.+2000 ո.+1500 ո.) 13500 ուրբլի: Հնաշվելով անասուններից ստացված յեկամուտը, վորը գյուղատնտեսական հարկով իսպառ չի հարկվում: Ընկերակցութեան անդամների վորոշումով 1500 ուրբլի հատկացված է այս և այն հասարակական ֆոնդին: Այսպէս, ուրեմն, գյուղատնտեսական հարկը նշանակելիս ընկերակցութեան ընդհանուր յեկամուտից պետք է դուրս գալ—

ա) 1200 ո. նրա համար, վոր ընկերակցութեանը 1931 թվին 30 հեկտար ավելի յե ցանել, քան 1930 թ.

բ) 2000 ո. նրա համար, վոր ընկերակցութեանը 20 հեկտար բամբակ է ցանել.

գ) 1300 ո. նրա համար, վոր նա ցանել է 5 հեկտար բանջարանոց (վորովհետև բանջարանոցի յեկամուտը պիտի հաշվի վոչ թե 1500 ուրբլուց, այլ հաշվելով հեկտարից 40 ո., այսինքն 200 ո.) և

դ) 1500 ո. ֆոնդերի հատկացումները, հետևաբար ընդամենը դուրս է գալիս 6 հազար ուրբլի:

Հարկման համար մնում է (13500—6000)=7500 ո.:

Այս 7500 ուրբլու համար ընկերակցութեանը պետք է վճարե 1 ուրբլուց 04 կ. հարկ, վոր անում է 300 ո.: Յեթե ընկերակցութեանը կատարե ցանքսի, մշակման և հավաքման իր արտադրական պլանը, հարկի գումարից պետք է

ունենա նաև 15 տոկոս զեղծ, այսինքն այլ ևս 45 ո., հետևաբար կմնա վճարելու (300—45) 255 ուրբլի: Ինքնին հասկանալի յե, վոր յեթե ընկերակցութեան անդամավրիկ են չքավոր-անհատականներ կամ կարմիր բանակայիներ, կարմիր պարտիզաններ կամ աշխատանքի ու պատերազմի ինվալիդներ, այդ դեպքում ընկերակցութեան հարկն ավելի պակասում է:

Գյուղսնահարկով հարկվում է այն կոլխոզնիկը, վորը յեկամուտ ունի իր սնեստութեան չհամայնացրած մասից

Կոլխոզնիկի տնտեսութեան չհամայնացրած մասի յեկամուտի հաշվարկը կատարվում է հումուլթի նորմաներով: Կոլխոզնիկների համար հումուլթի նորմաները նույնն են, ինչ վոր սահմանված է կոլխոզներ չմտած անհատական տնտեսութեանների համար: Կոլխոզնիկները վայելում են այն ամեն արտոնութեանները, վորոնք նախատեսված են անհատական տնտեսութեանների համար և բացի սրանից, բոլորովին ազատվում են հարկումից այն բոլոր անասունները, վորոնք գտնվում են գյուղատնտեսական կոմունաների, արտելների անդամների տնտեսութեաններում, ինչպէս նաև միաբան հողամշակման ընկերակցութեանների անդամների այն տնտեսութեաններում, վորոնց լծկանն ու ինվենտարը համայնացված են:

Միաբան հողամշակման այն ընկերակցութեանների անդամների տնտեսութեաններում, վորոնց լծկանն ու ինվենտարը չեն համայնացված, արդյունաբեր անասունը հարկումից չի ազատվում, այլ հարկվում է նորմաներով, վորոնք անհատական տնտեսութեանների համեմատութեամբ, յերկո նսամդաւակաւ են:

Ավտոնոմ մարզերի անասնաբուժական ընկերակցությունների անդամներին պատկանող արդյունաբեր անասունը, վորը գտնվում է տիրոջ ձեռքում, հարկվում է համաձայն շահույթի նորմաների՝ անհատական տնտեսությունների հանդեպ 20 տոկոս պակասեցրած:

Յեթե կոլտոգնիկն իր վոյ հողագործական վաստակի մի մասը փոխանցում է կոլտոգին, ապա վաստակի այս մասը հարկվում է կոլտոգում և վոյ թե կոլտոգնիկի իր տնտեսության հաշվում:

Այն բոլորը, ինչ վոր կոլտոգնիկն անմիջապես ստացել է կոլտոգից, գյուղատնտեսարկի չի յենթարկվում:

Կոլխսոգ մեծ չհավորները հարկ չեն վճարում

Հարկից բոլորովին ազատվում են այն կոլտոգնիկները, վորոնք 1930 թվին, վորպես սակավագոր անհատականներ, հարկից ազատված էին:

Կոլտոգնիկն իր թե համայնացրած, թե վոյ համայնացրած՝ հարկման յենթակա յեկամտի ամբողջ գումարից ավելի պակաս գյուղատնտեսական հարկ է վճարում, քան անհատական տնտեսությունը, վորի հարկման յենթակա յեկամտի գումարը նույնքան է: Այս հանգամանքն ավելի պարզ կլինի, յեթե քովեքով դնենք կոլտոգնիկի և անհատական տնտեսության հարկումը

	Կոլտոգնիկի տնտեսութ.	Անհատականի տնտեսութ.
Ուտոգների քանակը	5	5
Տնտեսության վոյ յեկամուտը	800	800
Վորից—		
Վոյ համայնացրած գյուղատնտեսությունից	150	350
Կոլտոգի մեջ աշխատելուց	550	—
Կուստար աշխատանքից	100	450
Հարկվում է տնտեսությունը	200	620
Հարկի գումարը	13,50	98,35

Այսպես, ուրեմն, կոլտոգնիկն ու անհատականը, ունենալով 890-ական ուրբլի յեկամուտ և հավասար թվով ուտոգներ, վճարում են հարկի տարբեր գումարներ—առաջինը 13 ու 50 կոպ., յերկրորդը—98 ու 35 կ.:

Յեթե կոլտոգնիկի վճարած հարկի գումարի վրա ավելացնենք և այն հարկի գումարը, վորը կոլտոգն իր հերթին վճարելու յե կոլտոգնիկի կոլտոգում ունեցած յեկամտի համար (3-ական կոպ. 550 ուրբլուց), նույնիսկ այդ դեպքում էլ կոլտոգնիկի վճարած հարկի ամբողջ գումարը կլինի (13,50—16,50) 30 ուրբլուց վոյ ավելի, մինչդեռ անհատականը՝ վճարում է ավելի քան յերեք անգամ (98,35):

Միջակ-անհասականի համար պահպանված են անցյալ արվա արտոնությունները

Ձքավոր և միջակ անհատականի բանվոր դասակարգի հետ ունեցած դաշինքն ամրապնդելու քաղաքականությունը, վորի հիմքի վրա դրված է նրանց արագագույն փոխանցումը կոլեկտիվացման ռեյսների, իր արտացոլումը գտնում է միջակ անհատականների տնտեսությունների հարկման սխտեմում:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքով աշխատավոր անհատական տնտեսությունների համար պահված են արտադրական և սոցիալիստական բնույթ կրող անցյալ տարվա բոլոր հիմնական, վճռական արտոնությունները:

1931 թվին կոլտոգի վոյ անգամ միջակ տնտեսությունների համար սահմանված են հետևյալ գլխավորագույն արտոնությունները.—

Յեթե 1930 թ. հարկման ժամանակ հաշվարկված ցանքային տարածության համեմատությամբ 1931 թվի ցանքային տարածությունն ավելի յե, այդ ավելին հարկման յենթակա չէ.

Հարկման յենթակա չե նաև բամբակի և շաքարի ճակնդեղի ցանքսը:

Կարարդինո-Ռալկարյան և Ադիգեյի ավտոնոմ մարզերում կանեփի ցանքսերը հարկվելու յեն կիսով չափ:

Յեթե առանց հարգելի պատնառի ցանքսը պակաս ե արված, հարկը գանձվելու յե անցյալ տարվա ցանքային տարածության հաշվով:

Սրա հետ մեկտեղ, որենքով նախատեսված ե, վոր այն տնտեսությունները, վորոնք առանց հարգելի պատճառի պակասացրել են իրենց ցանքսի մակարդակը, հարկվում են վոչ թե ընթացիկ տարվա ունեցած ցանքսի հաշվով, այլ անցյալ տարվա ցանքսի մակարդակի համաձայն: Ցանքսի մակարդակը պակասացնելու հարգելի պատճառներ հանդիսանում են՝ ընտանիքի աշխատունակ անդամների մահվան կամ ծանր հիվանդությունից պատճառով բանող ձեռքերի նվազումը, լծկանի ընկնելը, սերմացույի պակասը, յեթե միայն տնտեսությունը դիտավորյալ չի ծախսել իր սերմացուն: Ինքնին հասկանալի յե, վոր ցանքսի տարածությունը կրճատման պատճառների հարգելի կամ վոչ հարգելի լինելը պետք ե պարզել և ստուգել ամեն մի դեպքում առանձնապես:

Առանձնապես նշանավոր արտոնություններ են սահմանված կենդանաբուծության հարկման համար:

Կենդանաբուծությունն արագապես զարգացնելու նպատակով ընդլայնված են նաև արտոնությունները կենդանաբուծության դժով:

Յեթե 1930 թվի համեմատությամբ յեզների, կովերի և

վոչխարների (հարկման հասակի) թիվն ավելացել ե, այդ ավելի դուրսները լիովին ազատվում են հարկումից. անցյալ տարի անասունի այդ աճը հարկումից չեք ազատվում, այլ հարկվում եք շահույթի նորմաներից դուրս գալով, յերկու անգամ պակասացնելով այդ նորմաները:

Մահմանված են 50 տոկոսով պակասացրած շահույթի նորմաները կովերի և յեզների համար արդյունաբերական յուղագործությունից վայրերի այն տնտեսություններում, վորոնք կոնտրակտացիա յեն արել կենդանաբուծության պրոդուկցիան, այսինքն այդպիսի տնտեսություններում պրոդուկտիվ անասունները (կովերը, յերինջները և յեզները) հարկման յենթակա պիտի լինեն կիսով չափ:

Յերկրային Գործադիր Կոմիտեն Կարարդինո-Ռալկարյան և Ադիգեյի ավտ. մարզերը դնում ե արդյունաբերական յուղագործութ. վայրերի կարգին: Հետևաբար այս վայրերի միջակ-անհատականները, յեթե կենդանաբուծության ամբողջ բերքը (պրոդուկտը) կոնտրակտացիայով պետություն հանձնեն, հարկի նկատմամբ մեծամեծ արտոնություններ կստանան դրա համար:

Հարկից ազատվում են կարակուլի վոչխարները, նրանց խառնածինները (մետիսները): Ինչ զնով ել լինի, անհրաժեշտ ե բազմացնել անասունների թիվը, լավացնել նրանց վորակը: Դրանից տնտեսությունն ավելի յեկամուտ կունենա, բայց հարկ կվճարե պակաս: Անասունների բազմացումով ե նրանց վորակի լավացումով հնարավոր կլինի բանավորների պարենավորումն ու ժեղացնել մսով ու կաթնեղեններով և արդյունաբերության ել տալ ավելի հումույթ (կաշի, բուրդ):

Կարմիր բանակային միջակին—հարկային արտոնություններ

Անտիփոխ ֆնացել են անցյալ տարի գոյություն ունե-

ցող արտոնությունները, վորոնք կամ լիովին, կամ մասամբ հարկից ազատում եյին բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի ռազմա-ծառայողներին, նախկին կարմիր բանակա-յիններին և կարմիր պարտիզաններին, պատերազմի և աշ-խատանքի ինվալիդներին, վորոնք պատկանում են ինվա-լիդների առաջին յերեք խմբակներից մեկին, այլ և նրանց, վորոնք ծառայում են ռազմականացրած պահպանության մեջ, միլիցիայում, քրեական խուզարկություններում և այլն:

Դյուղատնտեսարկի որենքի 62-րդ հոդվածում մեջ բերված է արտոնությունների աղյուսակը նման տնտեսությունների համար: Աղյուսակում նշված է, թե տվյալ տնտեսության համար հաշվարկված հարկի վորպիսի գումարից և ինչպիսի պայմաններում (տնտեսությունը, բացի կարմիր բանակայի-նից, կարմիր պարտիզանից և ինվալիդից, չընի՞ արդյոք ուրիշ աշխատունակ անդամներ) վերապահված են այդպիսի տնտեսություններին հարկային արտոնություններ: Յեթե միջակ կարմիր բանակայինից հասանելի յե 10 ու հարկ, այդ հարկը նա վոչ մի դեպքում ել վճարելու չե. յեթե նրա-նից պատկանում է տասնից վեր և մինչև 15 ուրբի, այդ դեպքում նա հարկից 75 տոկոս զեղջ է ստանում, յեթե տնտեսության մեջ կան և ուրիշ աշխատունակ անդամներ և 90 տոկոս, յեթե ընտանիքում ուրիշ աշխատունակ չկա և այլն: Անփոփոխ պահված են արտոնությունները գաղթա-կանների համար, տարերային աղետներից և կուլակի բռն-նությունից փրկված տնտեսությունների համար, այլ և այն տնտեսությունների համար, վորոնք իրենց վրա յեն վերցրել վորբերի խնամակալությունն ու հոգաբարձությու-նը և այլն:

Զբաղմունքի ազատում են հարկային հանձնաժողովները:

Զբաղմունքի գյուղացիության նկատմամբ խորհրդային իշ-

խանության և կոմունիստական կուսակցության ցարդ ու-նեցած քաղաքականությունը մնում է անփոփոխ, այսինքն չքաղմունքը հարկից պետք է ազատ մնա: Բայց ներկայումս գյուղացիական տնտեսությունների մեջ տեղի յեն ունեցել խոշոր փոփոխություններ: Այսպես, Ադիգեյի և Հյուս. Ոսե-թիայի ավա. մարզերում կոլխոզ են մտել վոչ միայն բոլոր չքավոր, այլ և միջակ տնտեսությունները: Կոլխոզ են մտել նաև Կաբարդինո-Բալկարիայի և Չերքեզական ավտոնոմ մարզերի չքավոր-միջակ տնտեսությունների ճնշող մեծա-մասնությունը: «Չչեհներին»¹ ավտոնոմ մարզի բոլոր տըն-տեսությունների համարյա մեկ յերրորդ մասը նույնպես կոլխոզ է մտած: Դրա կապակցությամբ խիստ պակասել է անհատականների թիվը, պակասել է նաև չքավոր անհա-տականների թիվը: Սա հետևանք է այն բանի, վոր չքա-վորներն առաջին հերթին հասկացան կոլխոզի՝ անհատա-կան տնտեսության հանդեպ՝ ունեցած առավելությունը և դրա համար չքավորներն ամենից առաջ կոլխոզ անցան: Ինքնին հասկանալի յե, վոր յեղած պայմաններում չքավոր-ներին հարկից ազատելու կարգը վորոշ փոփոխությունների պիտի յենթարկվեր:

Անփոփոխ թողնելով այն դերքը, վորով բոլոր չքա-վոր անհատականների տնտեսություններն ազատվում են գյուղատնտեսական հարկից, նոր որենքը վերացրեց անցյալ տարի գոյություն ունեցող այն կարգը, վորով չքավորներն ազատվում եյին հարկման վոչ յենթակա միևիմուծի հետե-վանքով, այսինքն նկատի առնելով տնտեսությանը բաժին ընկնող յեկամտի առավելագույն չափը՝ ըստ ընտանիքի կազմի: Կարիք չկա գյուղի նոր պայմաններում պահպա-նել հարկման վոչ յենթակա միևիմուծները, այսինքն ազա-տել չքավորներին մեքենայորեն, առանց հաշվի առնելու

նրանց իսկական կարողութիւնը: Այս տարի գործ պետք է ունենալ շատ ավելի քիչ թիւով չքավոր տնտեսութիւնների հետ, ուստի և հարկավոր է չքավորներին ազատելու կարգը փոխել: Որեւէ չքավորներին և չքավորների ազատումն այս տարի կատարել գյուղական հարկային հանձնաժողովների ձեռքով և չքավոր տնտեսութիւնների ընտրականութեան կարգով, վորպիսի ընտրականութեան մասնակցում են կոլխոզնիկները, չքավոր գյուղացիութիւնը, ակտիւ միջակները և տեղի հասարակական կազմակերպութիւնները:

Քանի վոր չքավոր տնտեսութիւններին ճշշող մեծամասնութիւնը մտել է կոլխոզ, ինքնին հասկանալի յե դառնում, վոր չքավոր անհատականների հարկից ազատման տոկոսը պետք է կրճատվի՝ մանավանդ համատարած կոլեկտիւացման ռայոններում:

Չքավորներին հարկումից ազատելու իրավունքը պետք է գործադրել աշխատես, վոր դա նպաստե գյուղի ամբողջ չքավորութեանը կոլխոզներում ներգրավելու, վորպեսզի չքավորները նախաձեռնող լինեն կոլեկտիւացումն ամբողջացնելու գործում:

Վոյ հողագործական յեկամուսներն զգալիորեն բարձրացել են, նրանց հարկումն ավելացել է մի քիչ

Պետութիւնը մեծ գումարներ է ծախսում սոցիալատական նոր շինարարութեան համար: Դրա կազակցութեամբ գյուղական բնակչութեան վոյ հողագործական բազմատեսակ զբաղմունքներից և հատկապես գյուղից դուրս կատարված աշխատանքներից ստացված յեկամուսները զգալիորեն բարձրացել են:

Այս հանգամանքը նպատակահարմար է դարձնում վոյ

հողագործական աշխատանքներից ստացված յեկամուսներին հարկման վորոյ չափով ավելացումը: Դրա հիման վրա գյուղատնտեսական հարկման յենթակա մի քանի վոյ հողագործական զբաղմունքներից ստացված յեկամուսների յենթակա յուլութեան տոկոսն ավելացրած է: Որեւէ սահմանում է, վոր գյուղի սահմաններից դուրս (ոտխոժի), վարձման յեզանակով ձեռք բերված վարձագինը մտնում է տնտեսութեան հարկման յենթակա յեկամուսի մեջ 20 տոկոսի չափով (15 տոկոսի վոխարեն), իսկ դարձյալ գյուղի սահմաններից դուրս, բայց վոյ վարկման յեզանակով ստացված մյուս հասույթները—40 տոկոսի չափով (վոխանակ անցյալ տարվա 30 տոկոսի):

Վերացված է անցյալ տարի գոյութիւն ունեցող կարգը, վորով հարկումից ազատվում էին գյուղատնտեսական վոյ բարդ մեքենաների վարձու տալուց ստացված յեկամուսները: Վերացված է և աշխատանք, վորով մեքենայական շարժիչներ չունեցող գյուղատնտեսական բարդ մեքենաների վարձու տալուց ստացված գումարը մուծվում էր տնտեսութեան հարկման յենթակա յեկամուսի մեջ՝ հաշվելով 10-ից վոյ պակաս և 25-ից վոյ ավելի տոկոս: Որեւէ սահմանված է, վոր մեքենայական շարժիչներ չունեցող գյուղատնտեսական մեքենաների վարձու տալուց ստացված գումարները մուծվում են տնտեսութեան հարկման յենթակա յեկամուսի մեջ՝ հաշվելով 40-ից վոյ պակաս և 60-ից վոյ ավելի տոկոս:

Կուստարութիւնից և արհեստներից ստացված յեկամուսների նկատմամբ Յերկրային Գործադիր Կոմիտեն վորոշել է, վոր այդ յեկամուսները՝ գյուղատնտեսական հարկման յենթարկելու ժամանակ՝ ավելացվում են գյուղատնտեսութեանից ստացված յեկամուսի վրա, բայց վոյ ամբողջ

Ջուլթյամբ, այլ կոլխոզնիկներին նկատմամբ—50 տոկոսի չափ, իսկ կոլխոզի վոչ անդամ միջակ — անհատականների տնտեսություններից—60 տոկոսի չափ: Այսպես, ուրեմն, կոլխոզնիկներին վոչ հողագործական այդ վաստակներն ավելի պակաս են հարկվում, քան անհատականներինը: Հարկման յենթակա յեն վոչ հողագործական այն վաստակները, վոր ունեցել և տնտեսությունն անցյալ տարի, այսինքն 1930 թվի հունվարի 1-ից մինչև 1930 թվի դեկտեմբերի 31-ը:

Միջակ սնեստությունների հարկումը

Յուրաքանչյուր անհատական միջակ տնտեսությունից գյուղատնտեսարկը հաշվարկվում և տվյալ տնտեսության այն յեկամուտներից, վորոնք ստացվում են դաշտագործությունից, կենդանարուծությունից, բանջարանոցապահությունից, պարտիզպանությունից և գյուղատնտեսական ուրիշ սպեցիալ ճյուղերից, ինչպես նաև այն յեկամուտներից, վոր ստացվում են վոչ հողագործական դրադմունքներից:

Անհատական միջակ տնտեսության յեկամուտը հաշվարկվում և մեկ հեկտար հողի (ցանքսի, բանջարանոցի, պարտեզի և այլն) և մեկ գլուխ անասունի (կով, ձի, վոչխար և այլն) շահույթի նորմաներով: Յերկրային Գործադիր կոմիտեյի կողմից նորմաներ սահմանված են ամբողջ մարզերի համար: Մարզային գործադիր կոմիտեները նորմաներ սահմանել են շրջանների և առկական խորհուրդների համար: Այս նորմաներով հաշվարկվում և տնտեսության այն յեկամուտը, վորը յենթակա յե գյուղատնտեսարկման, իսկ հարկը հաշվարկվում և դրույքների աղյուսյակով, վոր տպագրված և նույնիսկ որենքում:

Գյուղատնտեսարկի նոր որենքով նախատեսված չե գյուղատնտեսությունից ստացված և նորմաների համաձայն

հաշվարկված յեկամուտի տոկոսական վրադիրքը, վոր յերկու տարի առաջ սահմանված էր: Այդ վրադիրքի նպատակն այն էր, վոր ավելի ուժեղ միջակային տնտեսությունները մի քիչ ծանր հարկման յենթարկվեն: Այժմ բոլոր միջակային տնտեսությունները հարկվում են առանց տոկոսական վրադիրքների, վորչափ էլ բարձր լինի նրանց յեկամուտը:

Կոլխոզի վոչ անդամ աշխատանքային տնտեսությունների համար անցյալ տարի գոյություն ունեցող հարկային դրույքների յերկու աստիճանացույցներից (չկալա) նոր որենքը պահպանել և միայն մեկը՝ կազմված այն հաշվով, վոր տնտեսության ամբողջական յեկամուտից դուրս և գալիս 20-ական ուրբի յեկամուտ՝ տնտեսության մեջ գտնված յուրաքանչյուր ուտողի համար և վերացրել և այն կարգը, վորով աշխատավորային անհատական տնտեսությունները հարկվում էյին յուրաքանչյուր ուտողին բաժին ընկած յեկամուտի հաշվով: Անհատական աշխատավորային տնտեսությունների համար հարկային դրույքի յերկու սխեմայի դույությունն անցյալում արդարանում էր Միության տարբեր վայրերում անհատ գյուղացիական յերդերի կազմի և կառուցվածքի բազմազանությունը: Գյուղատնտեսության դարգացման ներկա ետադում նպատակահարմար չե այլևս մեկը մյուսից տարբեր յերկու սխեմայի կառուցումն աշխատավորային անհատական տնտեսությունների հարկման գործում:

Գյուղատնտեսական հարկը նպաստում է մթերումների յեկ կոնսուակացիայի կասարմանը

Անհատական տնտեսությունների հարկման գործում շատ խոշոր և ելական փոփոխություն և մտցնում նորա

մութ հարկումն այն յեկամուտներն, վոր անհատական տնտեսութիւնները ստանում են գյուղատնտեսական պրոդուկտներն վաճառումից մասնավոր շուկայում՝ ավելի բարձր գներով, քան պետական և կոոպերատիվ մթերող կազմակերպութիւնների գներն են (կոնյունկտուր յեկամուտներ)։

Խորհրդային իշխանութիւնը թույլ է տալիս և չի խանգարում գյուղացիութեանը՝ ազատ գներով ծախուել հանել մասնավոր շուկայում իրենց ապրանքները։ Բայց յուրաքանչյուր գիտակից անհատական և կոլեկտիվ գյուղացի այդ իրավունքով կարող է ոգտվել միայն այն դեպքում, յերբ նա կատարել է իր կոնտրակտացիոն պայմանագիրը, պլանային մթերումների առաջադրանքը և ունեցած գյուղատնտեսական ապրանքները պետութեանը կամ կոոպերացիային հանձնելու իր ինքնապարտավորագրութիւնը։ Գյուղատնտեսական ապրանքների մասնավոր շուկայում վաճառուց գյուղացիութիւնը ստանում է շատ մեծ յեկամուտ և պարզ բան է, վոր այդ յեկամուտներն մեծագույն մասը բաժին է ընկնում իսկապես այն տնտեսութիւններին, վորոնք խախտում և թերանում են կատարացիային տալու մասին իրենց պարտավորագրութիւնը։ Հետեաբար անարդարացի կլինել, յեթե գյուղատնտեսական հարկման ժամանակ ուշադրութեան չառնվիին այդպիսի տնտեսութիւնների հիշյալ յեկամուտները։

Գյուղատնտեսական հարկի նոր որոնքով կոնյունկտուր յեկամուտները հաշվառելի յենթակա յեն 1930 թ. բերքատվութեան իրացումից սկսված մինչև 1931 թ. գյուղատնտեսական հարկի հաշվառելի սկիզբը։ Մասնավոր շուկայում վաճառումից գոյացած և հարկման յենթակա յեկամուտ է համարվում վոչ թե այդ վաճառումից ստացված

ամբողջ գումարն, այլ մասնավոր շուկայի և պլանամթերման գների միջև յեղած տարբերութիւնը։

Անհատական կոնյունկտուր յեկամուտների հարկման ուղին ընկելով, որենքը միաժամանակ առավելագույն չափով աջակցում է մթերումների կատարմանը և նպաստում է կոնտրակտացիայի իրացմանը։ Որենքը սահմանում է, վոր հարկումից լիովին ազատվում են մասնավոր շուկայում վաճառված այն ապրանքների յեկամուտները, վորոնց նկատմամբ տնտեսութիւնն ունի պլանային առաջադրանք և այդ առաջադրանքը նա լիովին կատարել է (կոնտրակտացիայի, պլանային առաջադրանքի կամ ինքնապարտավորագրութեան կարգով)։

Գյուղատնտեսական հարկման չեն յենթարկվում նրմանապես այն կոնյունկտուր յեկամուտները, վորոնց գումարը տնտեսութեան գլուխ 75 ուրբուց բարձր չէ։

Հաշվի առնելով անհատական տնտեսութիւնների կոնյունկտուր յեկամուտների հարկման գործի նորութիւնը և այստեղից հետևելիք դժվարութիւններն ու սխալները, գյուղատնտեսութեան հարկային որենքը նախատեսել է այնպիսի դրութիւն, յերբ մասնավոր շուկայում վաճառումից գոյացած հարկման յենթակա յեկամուտը չի կարող տնտեսութեան հարկման յենթակա ընդհանուր յեկամուտի 50 տոկոսից ավելի լինել, յեկամուտի, վորի մեջ հաշվված է գյուղատնտեսութիւնից և վոչ հողագործական զբաղմունքներից ընդհանուր կարգով ստացված յեկամուտը։ Յենթադրենք, վոր տնտեսութեան նորմաներով հաշվված յեկամուտը յերեք հարյուր ուրբլի յե և բացի դրանից, տնտեսութիւնն ունի 100 ու. վոր ստացել է վոչ հողագործական աշխատանքներից և վորից միայն 60 ուրբլին (60 տոկ.)

յենթակա յի հարկման: Այսպես, ուրեմն, տնտեսութեան հարկման յենթակա յեկամուտը հավասար է 360 ու: Տնտեսութեանը թերացել է կատարելու հացամթերումը, մսամթերումը և մասնավոր շուկայում 250 ու գումարի գյուղատնտեսական ապրանքներ ե ծախել բարձր գներով: Վորովհետև 250 ուրբլին կազմում է տնտեսութեան՝ ընդանուր կարգով հաշվված՝ յեկամտի 50 տոկոսից ավելին, հարկման պիտի յենթարկվի միայն 180 ուրբլին, այսինքն այդ տնտեսութեան հարկման յենթակա ամբողջ յեկամուտը կլինի 540 ու (300 ու գյուղատնտեսութեանից, 60 ու.—վոչ հողագործական աշխատանքից և 180 ու, այսպես կոչված՝ կոնյունկատուր յեկամտից):

Կոնյունկատուր յեկամուտները հարկման յենթարկելը կատարելապես կանոնավոր և նպատակահարմար միջոցառում է: Գյուղի ընդարձակված յեկամուտները, վոր դոյացել են նրա ապրանքի մի մասը բարձր գներով շուկայում ծախելուց, վորոշ կատեգորիայի տնտեսութեաններում, վորոնք չեն կատարել կոնտրակտացիայի պայմանադրերը, մթերումների պլանային առաջադրանքները և վորոնք նշանակելի չափով ոգտագործել են շուկայի կոնյունկատուրան, այդպիսի յեկամուտները կարող են և պետք է վոր մորիլիզացիայի յենթարկվեն մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու գործի համար, հնգամյակի արագադուլն իրագործման գործի համար և վերջապես ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման համար:

Կոլտոգնիկների այն յեկամուտները, վորոնք դոյացել են նրա գյուղատնտեսական ապրանքների մասնավոր շուկայում ծախվելուց, հարկման յենթակա չեն:

Կուլակին հարկման յենթարկել անհասական կարգով

Հարկի դասակարգային բովանդակութեանը պարզորեն յերևան է դալիս կուլակային տնտեսութեանների հարկման յեղանակի մեջ:

Մինչդեռ միջակային տնտեսութեանների յեկամուտը հաշվվում է շահույթի միջին նորմաներով, վորոնք սահմանված են մեկ հեկտար հողարածնի և մեկ գլուխ անասունի համար և այլն, կուլակի յեկամուտը հաշվվում է անհատական կարգով: Այդ նշանակում է, վոր կուլակի տնտեսութեան մեջ հարկման յենթարկվում է նրա ամբողջ յեկամուտը՝ առանց աղբյուրների վորեւ բացառութեան, առանց վորեւ արտոնութեան և զեղջի:

Որենքը բացահայտ ցուցմունքներ է տալիս կուլակային բոլոր տնտեսութեանների անհատական կարգով հարկման յենթարկելու մասին: Որենքը միաժամանակ պարտադրում է ուշադիր հսկողութեան սահմանել, վոր միջակային տնտեսութեաններն անհատական կարգով հարկման չենթարկվեն. այս կանոնը խախտողները յենթարկվում են խիստ պատասխանատվութեան:

Պահպանված է կուլակային տնտեսութեանների համար անցյալ տարի սահմանված դրույքների հատուկ (խըստագույն) աստիճանացույցը (շկալան): Կուլակային տնտեսութեանների յեկամտի ամեն մի ուրբլուց վերցվում է շատ ավելի մեծ հարկ, քան թի միջակային տնտեսութեանների յեկամտի մեկ ուրբլուց:

Թող յերկու տնտեսութեան, ամեն մեկը 5 ուտոդից բաղկացած, ունենան յեկամտի միատեսակ աղբյուրներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂԵՅՈՒՐՆԵՐԸ	Քանակը	1 միավորի յեկամուտը	Հարկման համար յե- ղած ամբ. յեկամուտը		
		Միջակայ- քը, զոր տեսակ պատկեր հանդիս վում է	Միջակայ- քը, զոր տեսակ պատկեր հանդիս վում է	Միջակայ- քը, զոր տեսակ պատկեր հանդիս վում է	Միջակայ- քը, զոր տեսակ պատկեր հանդիս վում է
Ցանք	5 հեկտար	30	70	150	350
Խոտհարք	3 »	10	30	30	90
Ձի	1 գլուխ	18	80	18	80
Կ ո վ	2 »	18	75	36	150
Վոչխար	10 »	3	10	30	100
Վոչ հողագործ. աշխա- տանք	400 »	—	—	240	400
Հարկման յենթակա ամբողջ յեկամուտը	—	—	—	504	1170
Հասանելի հարկը .				65,87	365 ա.

Այս որինակից յերևում է, վոր կուլակային տնտեսու-
թյունը, յեկամտի աղքատների միատեսակ պայմաններում,
շատ ավելի հարկ է վճարում, քան միջակայինը:

Կուլակային տնտեսությունների լիակատար հայտա-
բերման և հաշվառման, ինչպես նաև այդ տնտեսություն-
ներն անհատական կարգով գյուղատնտեսական հարկման
յենթարկելու նպատակով, որենքով յերկրային գործադիր
կոմիտեներին վերապահված է իրավունք տեղական պայ-
մանների համաձայն սահմանել այնպիսի նշանացույցներ,
վորոնց հիման վրա տնտեսությունը համարվելու յե կու-
ակային և յենթարկվելու գյուղատնտեսական հարկման
անհատական կարգով:

Թաքուն յեկամուտ, դրամագլուխ և գույք չունեցող
ապակուլակացրած տնտեսությունները գյուղատնտեսական

հարկման յենթարկվում են այն ընդհանուր հիմունքներով,
վորոնք սահմանված են աշխատավորային անհատական
տնտեսությունների համար, բայց վոչ մի արտոնություն
վայելելու իրավունք չունեն:

Կուլեկտիվիզացիայի բուռն աճումն անխուսափելիորեն
դասակարգային պայքարի սրումն առաջ բերեց գյուղում,
Կուլակը շատ լավ հասկանում է, վոր չքավոր - միջակային
տնտեսությունների հանրայնացումն անխուսափելիորեն
նախորոշում է կուլակության կորուստը: Սրա իսկ պատ-
ճառով, կուլեկտիվացման աճման հետ գուզընթաց, աճում է նաև
գաղաղած կուլակի դիմադրությունը, աճում է նրա
ակտիվ պայքարը խորհրդային իշխանության դեմ: Դեռ
1930 թվի հունվար ամսին Համ Կ (բ) Կ ԿԿ-ը արձանա-
դրում էր, վոր—

«Կուլեկտիվ շարժման դարգացման պլանով նախագծված
տեմպերը գերազանցված են»: Յեվ ապա—«Այսպիսով մենք
ունենք նյութական բազա՝ խոշոր կուլակային տնտեսու-
թյունները կոլտոզների խոշոր արտադրությունների հետ
փոխանակելու համար, ինչպես նաև սոցիալիստական հողա-
գործություն ստեղծելու ուղիով հզորապես առաջ ընթա-
նալու համար, չխոսելով արդեն սովխոզների մասին, վո-
րոնց աճումը գերազանցեց մեր բոլոր յենթադրությունները:
Այս հանգամանքը, վոր ԽՍՀՄ-ի բովանդակ ժողովրդական
տնտեսության համար վճռական նշանակություն ունի, լի-
ակատար հիմք ծառայեց կուլակցության իր պրակտիկ
աշխատանքի ընթացքում կուլակութան շահագործական տե-
ղենցները սահմանափակելու քաղաքականությունից անց-
նել կուլակության, վորպես դասակարգի, վերացման»:
(Համ Կ (բ) Կ ԿԿ-ի 1930 թ. հունվարի 5-ի արձանա-
դրությունից):

Հարկային գծով դա նշանակում է կուլակի այդպիսի հարկման յենթարկելու անհրաժեշտութիւնը. դա նշանակում է, վոր հարկի միջոցով կուլակից վերցվելու յե նրա յեկամտի մի մասը, վորպեսզի նա զրկված լինի չքավորին և միջակին շահագործելու հնարավորութիւնից:

Ամեն մի կոլխոզնիկի, ամեն մի չքավոր և միջակ անհատականի առաջ խնդիր է դրված՝ վճռական պայքար մղելու կոլխոզների կատարի թշնամու—կուլակի դեմ: Կոլեկտիվ ցանքսի տապալման համար կուլակի դործ դրած բոլոր ջանքերին հարկավոր է հասցնել անխնա հակահարված:

Գյուղատնտեսական հարկը հանդիսանում է ամենասուր գործիքներից մեկը՝ կուլակութեան դեմ պայքար մղելու, ինչպես նաև նրան, վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա, վերացնելու գործում: Այս գործիքը պետք է ամբողջովին և լիովին ոգտագործել:

Հյուսիսային Կովկասը ստանու և նոր օրենքի բովանդակ ոգուները

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը հատուկ նշանակութիւն ունի Հյուսիսային Կովկասի համար, այսինքն՝ համատարած կոլեկտիվացման յերկրամասի համար, հատկավոր տնտեսութեան և արդյունաբերական կենդանաբուծութեան յերկրամասի համար և վերջապես այն յերկրամասի համար, վորում հսկայորեն աճում են և մեծ ապագա ունեն բամբակագործութեան, բանջարանոցապահութեան և ծխախոտագործութեան տեխնիկական մշակութիւնները:

Հյուսիսային Կովկասը, համատարած կոլեկտիվացման ավարտման, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեութեան բազմակերպութեան շնորհիվ, կշահվի այն ամեն ոգուտներից, արտոնութիւններից և առավելութիւններից,

վոր տալիս է գյուղատնտեսական հարկի նոր օրենքը:

Բոլշեվիկներն անցկացնել գյուղատնտեսական հարկը

Սակայն գյուղատնտեսական հարկի անցկացման արդյունքները վոչ միայն կախված են օրենքի կազմվածքից, այլ և վոչ պակաս կախույն ունեն նույն օրենքը գործնականապես կենսագործելուց: Հետևաբար գյուղատնտեսական հարկի կազմակերպումը և նրա բոլշեվիկներն անցկացումը կարևորագույն խնդիր է վոչ միայն ֆինոսիսների, այլ և ամբողջ խորհրդային ապարատի, ամբողջ կուսակցական, խորհրդային և պրոֆեսիոնալ հասարակայնութեան համար: Բացառիկ ուշադրութիւն պետք է նվիրել կոլխոզներին հարկման գործին:

Բոլոր կազմակերպութիւններին ուշադրութիւնը, վերէից ներքէ, պետք է կենտրոնանա գյուղատնտեսական հարկային ամբողջ կամպանիայի այս հանգուցային հարցի վրա:

Ուղիղ և ժամանակին կատարված հաշվառքը, ուղիղ և ժամանակին կատարված հաշվետվութիւնը—անա սրանք են կոլխոզների կանոնավոր հարկման հիմքը:

Պարզորոշ դիժ ունենալ բոլոր կուլակային տնտեսութիւնները հայտաբերելու և նրանց բոլորին, անհատական կարգով, լիակատար հարկման յենթարկելու գործում. դա սակարգային ուղիղ գիժ տանել կոլխոզ մտած չքավոր տընտեսութիւնների, ինչպես և այս կամ այն ուսոններում մնացած անհատական չքավոր տնտեսութիւնների չհամայնացրած յեկամուտները հարկման յենթարկելու գործում. անհատական տնտեսութիւնների կոնյունկտուր յեկամուտները ուղիղ և պարզորոշ կերպով հարկման յենթարկելու:

հարկի հաշվառքը, հաշվարկումը և դանձումը լրիվ և ժամանակին կատարել և դրա հետ միասին գյուղատնտեսական հարկի մասին լայն, սխտեմատիկ, պլանային ազդեցություն-բացատրական աշխատանք տանել—անհա հիմնական խնդիրների այն խումբը, վորոնց լուծումը պետք է գրավե մեր ուշադրության կենտրոնը գյուղատնտեսական հարկային կամպանիայի բոլոր ետապներում:

ՈՐԵՆՔԸ—ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Վորպեսզի գյուղատնտեսական հարկի մասին նոր որենքը լրիվ ապահովել կարողանա լուծումն այն խնդիրների, վորոնք դրված են նրա առաջ, վորպես մի լծակի առաջ, վորն աջակցում է կոլեկտիվացման նոր ակիքի վերելքին, վորպես մի միջոցի առաջ, վորը խթան է հանդիսանում կոլխոզային յերկրորդ գարնանացանի աջող կատարման և կենդանաբուծության ու կաթնատնտեսության դարձացման համար, վերջապես, վորպես մի գործիքի առաջ, վորի սուր ծայրն ուղղված է կոլեկտիվացման ամենակատաղի թշնամի—կուլակի դեմ, անհրաժեշտ է, վոր դա անմիջապես կոլխոզնիկների և աշխատավորային անհատականների սեփականությունը դառնա:

Կուսակցական, խորհրդային, պրոֆեսսիոնալ և հասարակական կազմակերպությունները պետք է անմիջապես մասնաշաղկապ բացատրական աշխատանք ծավալեն՝ մոբիլիզացիայի յենթարկելով կոլխոզների բովանդակ ակտիվը, ինչպես նաև ուսուցիչների, խրճիթավարների, ագրոնոմների և այլ հսկայական բանակը:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքի ելույթյան, դերի և նշանակության մասին խսկական-մասնաշաղկապ բացատրական աշխատանք տանելու պայմանում միայն այդ որենքը գյուղատնտեսական հետադա սոցիալիստական վերակառուցման հզոր լծակը կդառնա:

ՀԱՎԵԼՎԱԾ

1931 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՈՐԵՆՔԸ ԸՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿՈՐԳԸ

ՌԻՍՖԶ ԺԿԽ-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1931 թվի սիսունական գյուղատնտեսական հարկի որենքն անցկացնելու կարգի մասին.

ՌԻՍՖԶ տերրիտորիայում 1931 թվին միասնական գյուղատնտեսական հարկն անցկացվում է այն հիմունքներով, վորոնք նախատեսված են միասնական գյուղատնտեսական հարկի կանոնադրով՝ հաստատված ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարներին Խորհրդի կողմից 1931 թ. մարտի 29-ին («Известия ЦИК СССР и ВЦИК» 1931 թ. մարտի 30-ին, № 88-4295):

ՌԻՍՖԶ Ժողովրդական Կոմիսարներին Խորհուրդը՝ ի զարգացումն միասնական գյուղատնտեսական հարկի կանոնադրի՝ ՎՈՐՈՇՈՒՄ Ե.—

1. ԿՈԼԽՈՉՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼԽՈՉՆԻԿՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

1. Կարտոֆիլի կամ բրնձի մեկ հեկտարից կոլխոզում

ստացված յեկամուտը համարել հավասար հացահատիկային կուլտուրաների մեկ հեկտարից ստացված յեկամուտին:

Ռայոնների ցանկը, ուր մեկ հեկտար բրնձից ստացված յեկամուտը հավասարվում է հացահատիկային կուլտուրաների մեկ հեկտարից ստացված յեկամուտին, սահմանվում է ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդների և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեների կողմից՝ ըստ պատկանելության (գյուղատնտ. հարկի կանոնագրի 12-րդ հոդված):

2. Յենելով զեղջի 10 տոկոսային միջին չափից, վոր սահմանված է կոլխոզներին՝ ցանքի, մշակման ու բերքահավաքի արտադրական առաջադրանքները կատարելու համար (գյուղատնտեսական հարկի կանոնագրի 13-րդ հոդված), հանձնարարել ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդներին և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեներին առանձին ռայոնների կոլխոզների համար սահմանել հարկային զեղջի տարբեր չափեր՝ նայած ռայոնների եկոնոմիկ պայմաններին, ինչպես և կոլխոզներին տրված արտադրական առաջադրանքներին:

3. Անհատական տնտեսությունները, վորոնք կոլխոզ են անցել թեկուզ յեկամտի աղբյուրների հաշվառից հետո և վորոնք համայնացրել են իրենց ցանքը, հարկման յենթակա յեն կոլխոզների անդամներին հետ հավասարա յետ:

2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

4. Անհատական տնտեսությունների, ինչպես նաև կոլխոզների անդամներին պատկանած տնտեսությունների չհամայնացած մասի հարկման յենթակա յեկամտի հաշվառվել կատարելու համար միասնական գյուղատնտեսական հարկի կանոնագրության 35-րդ հոդվածի համաձայն, սահմանվել յեկամտային հետևյալ միջին նորմաները.—

ԱՎՏՈՆՈՄ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3 Ե 4 ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐ (ՄԱՐԶԵՐ)	Մեկ հեկտար հողի յեկամտարե- րությունը ուրբու հաշվով							Անասունի գլուխ յե- կամտ. ուրբ. հաշվով				
	Ցանքից	Վարելահո- ղից	Խոտահա- րից	Բանջարան. և բոստան.	Խաղողի աղ- վիներենց	Գարնանդե- բենց	Միակտու- րից	Զիւ ուլտ, զորի	Խաղող յեղջ. բացի յեղջ.	Եղջիներենց	Եղջից	Վոլխոզներ և յակիներենց
ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐ 3Ե4 ՄԱՐԶԵՐ												
Հ. Միւր. յերկրամ.	39	—	12	170	—	—	—	16	16	11	—	2,0
Հեռ.-Արեւել »	42	—	18	150	—	—	—	15	17	9	—	1,8
Արեւմտյան մարզ	58	—	21	300	—	150	—	23	25	14	—	2,0
Արեւմ.Միւր. յերկ.	41	—	11	170	—	—	—	16	16	11	—	2,0
Իվան. արդ. մարզ	67	47	27	370	—	190	—	32	34	—	—	2,5
Լենինգր. մարզ	60	39	17	320	—	160	—	24	29	—	—	1,5
Մոսկվայի մարզ	62	44	28	400	—	220	—	30	34	—	—	2,5
Նիժնեգորոդ. յերկ	46	32	19	250	—	190	—	29	22	—	—	2,0
Ստորին Վոլգ. »	35	—	10	230	250	200	—	24	21	13	—	3,0
Հյուսիսային »	67	46	20	250	—	—	—	28	20	—	—	1,5
Հ.-Կովկաս »	40	—	11	200	370	220	250	23	20	15	—	3,0
Միջ. Վոլգայի »	41	29	11	200	—	160	—	26	21	14	—	2,7
Ուրալի մարզ	46	—	16	200	—	—	—	23	21	15	—	2,0
ԱՎՏՈՆՈՄ ԽՍՀ												
Բաշկիրների Ա.Ս.Հ.	41	—	16	200	—	—	—	24	15	15	—	2,5
Բուր.-Մոնղոլ. Ա.Ս.Հ.	35	—	8	150	—	—	—	13	12	9	—	2,0
Դաղստանի Ա.Ս.Հ.	36	—	12	200	350	200	—	18	12	10	—	2,5
Ղազախստանի Ա.Ս.Հ.	43	—	6	210	450	200	300	15	15	8	6	2,0
Ղարակալպակի Ա.-Մ.	44	—	6	210	450	200	300	15	15	8	6	3,0
Կարելիայի Ա.Ս.Հ.	64	43	17	—	—	—	—	29	25	—	6	1,5
Խրոնիդների Ա.Ս.Հ.	50	—	10	310	400	240	250	14	15	11	—	3,0
Ղերմի Ա.Ս.Հ.	43	—	11	280	500	400	400	25	22	15	6	3,5
Գերմ. Պոլոլթ. Ա.Ս.Հ.	35	—	11	230	—	200	—	28	21	16	6	2,4
Թաթարստանի Ա.Ս.Հ.	39	26	16	210	—	200	—	22	18	—	—	2,4
Չուվաշների Ա.Ս.Հ.	42	29	15	—	—	160	—	20	20	—	—	1,0
Յակուտների Ա.Ս.Հ.	41	—	5	—	—	—	—	15	15	—	—	1,5

5. Հազարատանի, խողզատանի և Դաղատանի ավտո-
նոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիտեները
խորհուրդներին, Հարակալակատանի մարզային գործկոմին
և Հյուսիսային Կովկասի յերկրային գործկոմին վերապահել
իրավունք՝ յեկամտային տարբեր նորմաներ սահմանելու
անջրդի և ջրարբի ցանքերի համար, յելնելով մեկ հեկտար
ցանքի յեկամտաբերութեան նորմաներից: Հազարատանի,
Խողզատանի, Դաղատանի ավտոնոմ հանրապետութիւն-
ները, Հարակալակատանի մարզային գործադիր կոմիտեն
և Հյուսիսային Կովկասի յերկրային գործադիր կոմիտեն
կարող են բամբակագործական ռալոնների առանձնահատուկ
տնտեսութիւններում հացահատիկային մշակութիւններով
բռնված ջրարբի հողերի համար սահմանել յեկամտաբերու-
թեան բարձրացած նորմաներ:

Բ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ (ՍՊԵՑԻԱԼ)
ՃՅՈՒՂԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ.

6. Ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական
կոմիտեները խորհուրդները, յերկրային և մարզային գոր-
ծադիր կոմիտեները կարող են, յեկամտաբերութեան տար-
բեր նորմաներ սահմանել գյուղատնտեսութեան սպեցիալ ճյու-
ղերի այս կամ այն տեսակի համար (ջրարբի և անջրդի հո-
ղերում գտնված բանջարանոցների, հատապտղաբանների,
ծխախոտի, մախորկայի և այլն՝ նայած սրանցից ամեն մեկի
յեկամտաբերութեանը:

7. Կոլեկտիվ բանջարանոցները և այգիները, ինչպես
նաև անհատական աշխատանքային տնտեսութիւնների
բանջարանոցներն ու այգիները, վորոնք գտնվում են քա-
ղաքի սահմաններում կամ նրա արվարձաններում, ամենու-
րեք յենթարկվում են գյուղատնտեսական հարկման այն

կարգով, վոր նախատեսված է միասնական գյուղատնտե-
սական հարկի մասին գոյութիւն ունեցող կանոնադրով:

Գ. ՎՈՉ-ՀՈՂԱԳՈՐԾԱՅԻՆ ՅԵԿԱՄՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

8. Արհեստագործական (պրոմիսլովիյ) արտելների ըն-
կերակցութիւնների այն անդամների յեկամտաները, վո-
րոնք բացառապես արտելից ստացած հումուլթն են բանե-
ցնում և մաս չունեն արտելի արդիւնքից ու իրենց արտա-
դրանքն ամբողջապես հանձնում են պետական և կոոպերա-
տիվ կազմակերպութիւններին, գյուղատնտեսական հարկով
հարկվում են աշխատավարձի հարկման համար սահմանված
հիմունքներով՝ անկախ այն բանից, թե արտելի այդ ան-
դամներն իրենց տնտեսութիւններում են ապրում, թե
նրանցից դուրս:

Հարկման հիշյալ կարգը տարածվում է մյուս արհես-
տագործական արտելների այն անդամների (վորոնց թը-
վում նաև տրանսպորտի) վրա, վորոնք իրենց արտադրանքի
միջոցները հասարակայնացրել են, վարձու աշխատանքից
չեն ոգտվում և արհեստագործական կոոպերացիայի սիստե-
մում են գտնվում:

9. Պետական որգաններին և կոոպերատիվ կազմա-
կերպութիւններին սպասարկող սայլավարների (վոզչիկ) յե-
կամտաները գյուղատնտեսական հարկով հարկվում են այն
կամուտները գյուղատնտեսական հարկով (ոտխոփի)
չափով, վոր սահմանված է դուրս տեղերում (ոտխոփի)
վարձովի աշխատանք ունեցողների համար (20 տոկոս), յե-
թե այդ սայլավարները վարձովի աշխատանք չեն կիրա-
ռում:

10. Պետական և կոոպերատիվ կազմակերպութիւնների
հողամասերում կամ անտառներում աշխատող անտառապահ-
ների, ջրով փայտեղեն քողների, ապրանքատար վերակա-

ցունների (գրուգչիկ) և այլն բանվորների յեկամուտները, ինչպես նաև շինանյութեր փոխադրող բանվորների յեկամուտները, յեթե այդ փոխադրումը կատարվում է վոչ սեփական ձեռքով, գյուղատնտեսական հարկով հարկվում են այն կարգով, վոր սահմանված է աշխատավարձի հարկման համար:

11. Վորսորդական ռայոններում վորսով պարապողների յեկամուտը գյուղատնտեսական հարկի յենթարկելի յեն այն հիմունքներով, վորոնք սահմանված են տնայնագործական, արհեստավորական և այլ տեսակի զբաղմունքների (պրոմիսլովի) համար:

Հարկման հիշյալ կարգին յենթակա ռայոնների կարգացուցակը կազմվում է ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհրդների և յերկրային ու մարդային գործադիր կոմիտեների ձեռքով:

Այն անձիւրը, վորոնց յեկամուտները հիշյալ ռայոններում յենթարկելի յեն գյուղատնտեսական հարկման, ազատ են միասնական մաքսատուրքի վճարումից՝ վորսալու արտոնագիր ստանալու համար:

12. Զկնորսության հետ միաժամանակ և՛ գյուղատնտեսությամբ պարապող անհատական տնտեսությունները յենթակա յեն ամենուրեք գյուղատնտեսական հարկման, ձկնորսությունից ստացված յեկամուտի 40 տոկոսի չափով՝ գյուղատնտեսական հարկի կանոնագրի 28-րդ հոդվածի 3-րդ ծանոթության համաձայն:

Կարելիայի, Դաղստանի և Ղազախստանի ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, ինչպես նաև Հյուսիսային, Միջին-Վոլգայի,

Հյուսիսային Կովկասի և Հյուսիս-Արևելյան յերկրամասերի յերկրային գործադիր կոմիտեներին և նմանապես Ուրալի մարդային գործադիր կոմիտեներին իրավունք է վերապահվում առանձին ռայոններում գյուղատնտեսական հարկի յենթարկել և՛ այն անհատական ձկնորսային տնտեսությունները, վորոնք իրենց վորսը կոնսրակտացիայով չեն հանձնում պետական ձկնարդյունաբերական ձեռնարկություններին կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

Այդ դեպքում գյուղատնտեսական հարկման յենթարկվում է ձկնորսային զբաղմունքից ստացված յեկամուտն այն չափով, վորպիսին սահմանված է գյուղատնտեսությամբ պարապող ձկնորսների համար (40 տոկոս):

3. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

13. Սահմանել հետևյալ հատկանիշները, վորոնց հիման վրա տնտեսությունները կուղակային են ճանաչվում և հարկվում են անհատական կարգով (միասնական գյուղատնտեսական հարկի կանոնագրի 80-րդ հոդված).—ա) վարձովի աշխատանքի սխտեմատիկ կիրառումը գյուղատնտեսական աշխատանքների համար, ինչպես նաև վարձովի աշխատանքի կիրառումը տնայնագործական արհեստանոցներում և ձեռնարկներում, բացի այն դեպքերից, յերբ վարձովի աշխատանքի կիրառումը, համաձայն գոյություն ունեցող որինսդրության, խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավագրկություն առաջ չի բերում. բ) ջրաղացների, ձիթահանքերի, կրուպորուշկաների, կորեկագործների (պրոսորուշկաների), բուրգաստրիչների (վոլնոչեսալկաների), բուրգգործների (շերաստրիակի), տրորող (տրորչնի) գործատների, կարտոֆիլի, մրգեղենի կամ բան-

ջարեղենի չորացարանների և կամ այլ արդյունաբերական ձեռնարկների առկայությունը տնտեսություն մեջ, յեթե դրանք կիրառում են մեքենայական շարժիչներ, նմանապես յեթե տնտեսությունն ունի այնպիսի ձեռնարկներ, վորոնք գործում են քամու կամ ջրի ուժի կիրառման միջոցով և և վորոնց յեկամուտն ավելի յե այն չափերից, վորոնք սահմանված են ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների, յերկրային և մարզային գործադիր կոմիտեյի կողմից, գ) արդյունաբերական այնպիսի ձեռնարկության առկայությունը, վորը շահագործում է շրջակա բնակչությանը կամ տունը տրված աշխատանքի միջոցով, կամ այդ ձեռնարկությունը վարձու տալու միջոցով և կամ նույն ձեռնարկության մեջ վերամշակելու նպատակով գյուղատնտեսական մթերքներ գնելու միջոցով, դ) մեքենայական շարժիչներ ունեցող գյուղատնտեսական բարդ մեքենաների սխտեմատիկ վարձատրությունը կամ այդ մեքենաների վարձովի բանացնելը ուրիշների տնտեսություններում, զ) հողի վարձակալությունն այնպիսի պայմաններով, վորոնք ռայոնական հարկային հանձնաժողովների կողմից ճանաչվում են ստրկացուցիչ (կարալային) վարձու տվողի համար, ե) առևտրական և արդյունաբերական շահագործման նպատակով պարտեզի, այգու և այլն վարձակալությունը, ընդ վորում ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները սահմանում են պարտեզների և այգիների վարձատվությունն այն վերջնական չափերն ու պայմանները, վորպիսի դեպքերում վարձակալության առկայությունը չի կարող անհատական կարգով հարկվելու հատկանիշ նկատվել, ը) բնակության կամ ձեռնարկության համար առանձին սարքավորված շինու-

թյունների սխտեմատիկ վարձատվությունը, ընդ վորում ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները սահմանում են յեկամտի ծայրագույն այն չափը, յերբ այդ վարձակալությունը չի կարող անհատական կարգով հարկվելու հատկանիշ նկատվել, թ) առևտուրը կամ առևտրական միջնորդությունն ու վաշխառությունը կամ այլ անաշխատ յեկամտների առկայությունը:

Ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները կարող են տեղական պայմաններին համապատասխան լրացումներ անել կուլակային տնտեսությունները վորոշող ներկա հոդվածում հիշատակված հատկանիշների վրա:

Սահմանված հատկանիշները, տեղական գործկոմիտեների վորոշումներով, հայտարարվում են ի գիտություն ազգաբնակչության:

14. Ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները պատասխանատվություն են կրում այն մասին, վոր կուլակային տնտեսությունների հատկանիշները վորոշելիս և անհատական հարկումն անցկացնելիս թույլ չտան միջակ տնտեսություններն անհատական կարգով հարկման յենթարկելու:

Ռայոնական գործադիր կոմիտեները և գյուղական խորհուրդները պատասխանատվության յեն յենթարկվում միջակ տնտեսություններն անհատական հարկման յենթարկելու համար, ինչպես նաև այն դեպքում, յերբ կուլակային

տնտեսութիւնները լրիւ չհայտաբերեն, հարկման չյենթարկեն և հարկը նրանցից չգանձեն:

Ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային դործադիր կոմիտեները յուրաքանչյուր ռայոնի համար, անհատական հարկումն անցկացնելու նպատակով, պետք է զատեն պատասխանատու անձեր, ապահովեն տնտեսութիւնների դանդառների շուտափուլ քննարկումը՝ անհատական կարգով հարկումն անկանոն կատարված լինելու մասին, ինչպես նաև պետք է դատական և վարչական խստագույն պատասխանատվութեան յենթարկեն այս հոդվածի կետերը խախտողներին:

4. ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ.

15. Սահմանել հետևյալ ցուցակն այն ռայոնների, ուր կոլտոգի անդամներին պատկանած տնտեսութիւնների, ինչպես նաև աշխատանքային անհատական տնտեսութիւնների կտավատի և կանեփի ցանքերը հարկվում են ըստ յեկամտաբերութեան նորմաների՝ կիսով չափ պէկասեցրած մէյն նորմաների համեմատութեամբ, վորոնք սահմանված են զաշտագործութեան համար (վարելահողի և ցանքի համար):

Ա. ԿՏԱՎԱՏԻ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Թաթարների, Չուվաշների, իռլզների, Բաշկիրների ավտոնոմ հանրապետութիւնները, Արևմտյան Սիբիրի, Արևելյան Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Նիժեգորոդսկի, Հյուսիսային և Միջին Վոլգայի յերկրամասերը, Ուրալի, Մոս-

կվայի, Իվանովո-Սերգյունաբերականի, Լենինգրադի և Արևմտյան մարզերը:

Բ. ԿԵՆՏՔԻ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Թաթարների, Չուվաշների, Բաշկիրների և իռլզների ավտոնոմ հանրապետութիւնները, Արևմտյան Սիբիրի, Արևելյան Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Հյուսիսային Կովկասի, Ստորին Վոլգայի, Միջին Վոլգայի, Նիժեգորոդսկի յերկրամասերը, Ուրալի, Մոսկվայի, Արևմտյան և Կենտրոնական Սևասողի մարզերը:

Ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային դործադիր կոմիտեները սահմանում են ռայոնների ցուցակը, իսկ վերջինները—գյուղական խորհուրդների և գյուղերի ցուցակը, ուր կտավատի և կանեփի ցանքերը պետք է հարկվեն ըստ յեկամտաբերութեան կիսով չափ պէկասեցրած նորմաների (գյուղատնտ. հարկի կանոնագրի 56-րդ հոդված):

16. Հանձնարարել ավտոնոմ հանրապետութիւնների ժող. կոմիսարների խորհուրդներին, յերկրային և մարզային դործադիր կոմիտեներին՝ սահմանել արդյունաբերական յուղագործական ռայոնները, ուր կովերի և յեզների յեկամտաբերութեան նորմաներն այն տնտեսութիւնների համար, վորոնք անասնաբուծական պրողուկցիաները հանձնելու մասին կոնտրակտացիոն պայմանագրեր են կնքել, յերկու անգամ պէկասեցվում են՝ համեմատութեամբ տվյալ ռայոնի համար սահմանված յեկամտաբերութեան նորմաների (գյուղատնտ. հարկի կանոնագրի 58-րդ հոդված):

5. ՀԱՐԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

17. Սահմանել հարկի հատուցման հետևյալ վերջնական ժամկետներն ինչպես անհատական աշխատանքային տնտեսությունների, այնպես էլ կոլխոզների անդամների տնտեսությունների չհամախացրած մասի համար:

Ավտոնոմ հանրապետություններ և յերկրամասեր (մարզեր)	I Ժամկետ	Հարկի	II Ժամկետ	Հարկի	III Ժամկետ	Հարկի
	թիվ	0/0-ը	թիվ	0/0-ը	թիվ	0/0-ը
ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐ ՅԵՎ ՄԱՐԶԵՐ						
Արևել. Սիբ. յերկր.	1 X	40	15 XI	60	—	—
Հեռ. Արևելքի »	1 X	30	1 XI	50	1 XII	20
Արևմտյան մարզ	15 IX	35	1 XI	50	1 XII	15
Արևմտ. Սիբիրի յերկր.	1 X	40	15 XI	60	—	—
Իվանովի առդ. մարզ	5 IX	50	1 XI	50	—	—
Լենինգրադի »	15 IX	35	1 XI	50	1 XII	15
Մոսկվայի »	1 IX	40	1 XI	60	—	—
Նիժնեգորոդսկի յերկ.	15 IX	50	15 XI	50	—	—
Ստորին-Վոլգ. »	1 IX	50	1 XI	50	—	—
Հյուսիսային »	15 IX	30	1 XI	50	1 XII	20
Հյուս. Կովկասի »	1 IX	60	1 XI	40	—	—
Միջին Վոլգայի »	1 IX	50	1 XI	50	—	—
Ուրալի մարզ. . .	1 IX	60	15 XI	40	—	—
ԱՎՏՈՆՈՄ ԽՈՅ						
Բաշկիրիայի ԱՍՍՀ	15 X	50	1 XI	50	—	—
Բուրյատ-Մոնղ. »	1 IX	35	1 XI	50	1 XII	15
Դաղստանի »	1 IX	60	1 XI	40	—	—
Դաղստանի »	1 X	50	15 XI	50	—	—
Ղաբաղականի ԱՄ	1 X	50	15 XI	50	—	—
Կարելիայի ԱՍՍՀ	15 IX	30	1 XI	50	1 XII	20
Խոզդերների »	1 X	50	15 XI	50	—	—
Ղրիմի »	1 IX	60	1 XI	40	—	—
Պովոլժ. Գերմ. »	1 IX	60	1 XI	40	—	—
Թաթարների »	15 IX	50	15 XI	50	—	—
Չուվաշների »	15 IX	40	15 XI	60	—	—
Յակուտների »	15 IX	50	1 I	50	—	—

6. ՀԱՐԿԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

18. Հանձնարարել ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիտեաների խորհուրդներին և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեաներին՝ սահմանել գյուղատնտեսական հարկից անմիջապես գյուղական բյուջեներին հասանելի հատկացումների չափը (կանոնագրի 102-րդ հոդված):

7. ՀԱՐԿԸ ԳԱՆՁՈՂ ՈՐԳԱՆՆԵՐԸ

19. Միասնական գյուղատնտեսական հարկի անցկացումը գյուղական վայրերում հանձնվում է գյուղական խորհուրդներին և ռայոնական գործադիր կոմիտեաներին, իսկ այն քաղաքներում, ուր բնակչությունը յենթարկվում է գյուղատնտեսական հարկման — քաղաքային խորհուրդներին:

Գյուղական խորհուրդները, ռայոնական գործադիր կոմիտեաները և քաղաքային խորհուրդները պատասխանատվություն են կրում միասնական գյուղատնտեսական հարկի կանոնավոր կիրառման համար:

20. Գյուղական խորհուրդների պարտականությունն է՝ ա. յեկամուտների աղբյուրների հաշվառքը կատարել, բ. կազմել նախնական ցուցակները՝ 1) այն սակավաուժ տնտեսությունների, վորոնք ամբողջապես կամ մասնակի ազատ պիտի մնան հարկից, 2) տնտեսությունների, վորոնց այն յեկամուտներն են հարկվելու, վորոնք ստացվում են գյուղատնտեսական մթերքների մասնավոր շուկայում վաճառելուց, 3) կուլակային տնտեսությունների, վորոնք անհատական կարգով յենթակա յեն հարկման, գ. անհատական տնտեսությունների, ինչպես նաև կոլխոզի անդամների

տնտեսությունների հարկման յենթակա յեկամուտների չափերի հաշվարկը կատարել, դ. անհատական տնտեսություններից և կոլտոգների անդամների տնտեսություններից հասանելի գյուղատնտեսական հարկի հաշվարկը կատարել, դրույքային թերթերը լրացնել և հանձնել, դ. համապատասխան ղեպքերում հարկային վճարումներն ընդունել և սահմանյալ կարգով վարկային հիմնարկություններին ուղարկել, ե. տարերային աղետների ղեպքում ակտեր կազմել, ը. հարկի հաշվով ավելի ստացված գումարները վերադարձնել կամ ապագա վճարումների հաշվին գրել այն ղեպքերում, յերբ վճարների ընդունելությունը կատարողը գյուղական խորհուրդն է. թ. վարել հարկային գործավաճությունը, հաշվետարությունը և հարկերի հաշվետվությունը, ժ. տուգանքի յենթարկել նրանց, վորոնք թագանում են իրենց յեկամուտների աղբյուրները, ի. հարկադրական միջոցներ կիրառել հարկերը գանձելու համար այն կարգով, վոր նախատեսված է հարկերի գանձման կանոնագրով:

21. Բոլոր գյուղական խորհուրդներին կից կազմվում են գյուղական հարկային հանձնաժողովներ՝ գյուղական խորհրդի նախագահի նախագահությամբ, հանձնաժողովի կազմի մեջ մտնում են յերկու անդամ գյուղական խորհրդից (ֆինանսական և հողային սեկցիաներից), մի-մի ներկայացուցիչ կոլտոգներից կամ կոլտոգային միավորումներից, չքավորների խմբակցությունից և համապատասխան բնակեցրած պունկտի ներկայացուցիչը, վորն ընտրվում է քաղաքացիների ընդհանուր ժողովի կողմից:

22. Գյուղական հարկային հանձնաժողովները պարտական են՝ ա. քննարկել և հաստատել այն սակավաուժ տնտեսությունների ցուցակը, վորոնք գյուղական հարկից

ազատվում են, բ. վորոշել կոլտոգների անդամների և անհատական տնտեսությունների վոչ հողագործական դրույքաժույճից ստացված յեկամուտները, գ. կատարել նախնական քննարկումն այն տնտեսությունների ցուցակների, ուր հարկվում են մասնավոր շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառումից ստացված յեկամուտները, ինչպես նաև աղբյուրի յեկամուտների չափերի նախնական վորոշումը կատարել (կանոնադրի 49-րդ հոդված), դ. նախորոք քննարկել և հաստատել անհատական կարգով հարկման յենթակա տնտեսությունների ցուցակները, ինչպես նաև նույն տնտեսությունների յեկամուտների չափերը նախապես վորոշել, գ. քննարկել և լուծել վճարողների միասնական գյուղատնտեսական հարկի անկանոն գործադրման մասին տրված դանդաղները, ինչպես նաև լուծել արտոնության և ղեղձի համար ստացված խնդիրները, վորոնք նախատեսված են միասնական գյուղատնտեսական հարկի կանոնագրով և ներկա վորոշումով:

Սակավաուժ տնտեսությունների ցուցակները, մասնավոր շուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառող տնտեսությունների ցուցակները, ինչպես նաև անհատական կարգով հարկվող կուլակային տնտեսությունների ցուցակները, գյուղական հարկային հանձնաժողովների քննարկումից առաջ, պետք է խնամքով քննվեն և ստուգվեն չքավորների, կոլտոգային ակտիվի, ակտիվ-միջակների և գյուղական հասարակայնության ժողովներում:

23. Ռայոնական գործադիր կոմիտեները պարտական են՝ ա. յեկամուտների աղբյուրների հաշվառքը կատարելու, յեկամուտների չափերը վորոշելու, սակավաուժ տնտեսությունների, մասնավոր շուկայում մթերքներ վաճառող տնտեսությունների և անհատական կարգով հարկվելու յեն-

թակա տնտեսությունների ցուցակները կազմելու և հաստատելու, արտոնություններ վերապահելու, գյուղատնտեսական հարկը հաշվարկելու և գանձելու, ինչպես և հարկի սահմանված հաշվետվությունը ներկայացնելու ընդհանուր ղեկավարությունն ու հսկողությունը ունենալ, բ. հրահանգություններ տալ կոլտոգային վարչություններին, հսկողություն ունենալ գյուղատնտեսական հարկի նրանց կողմից կատարված հաշվարկի վրա և ստուգել հարկի նախնական և վերջնական հաշվարկի ուղիղ կատարված լինելը, գ. հարկադրական միջոցներ կիրառել այն կարգով, վոր նախատեսված է հարկերի գանձման կանոնագրով, գ. տուգանել կոլտոգից պատկանյալ հարկի հաշվարկումը կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին չենք էլայացնելու, ինչպես և սխալ տեղեկություններ տալու համար (կանոնագրի 99-րդ հոդված):

24. Ռայոնական գործադիր կոմիտեյի նախագահի կամ նրա տեղակալի նախագահությամբ ռայոնական գործադիր կոմիտեներին առընթեր կազմվում են գյուղատնտեսական միասնարկի հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ մտնում են՝ ա. ռայոնական ֆինանսական բաժնի վարիչը, բ. հողային կոլտոգից, ռայոնական պրոֆեսիոնալ միավորումից և ֆՈՒ-ից:

25. Ռայոնական հարկային հանձնաժողովները պարտական են՝ 1) նախնական քննարկության յենթարկել ռայգործկոմի վորոշման նախագիծը՝ ա. յեկամտի առանձին աղբյուրներից գոյացած յեկամտաբերության նորմաները սահմանելու մասին այն դեպքերում, յերբ կանոնագրի 35-րդ հոդվածի կարգով այդ իրավունքը ռայգործկոմիներին է վերապահված, բ. գյուղատնտեսության վորոշ ճյուղերը գյուղատնտեսական հարկի յենթարկելու մասին, ինչպես նաև

գյուղատնտեսության այդ ճյուղերի յեկամտաները վորոշելու կարգի մասին (կանոնագրի 28-րդ հոդվածի 1-ին ծանոթություն). գ. գյուղխորհուրդների և գյուղերի ցուցակների մասին, վորտեղ կտավատից ու կանեփից ստացված յեկամտաբ հարկվում է յեկամտաբերության կես նորմայի հաշվով:

2) Լուծել սակավաուժ կոլտոգներին հարկից ազատելու խնդիրը (կանոնագրի 8-րդ հոդված):

3) Քննարկել և հաստատել մասնավոր շուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառող տնտեսությունների ցուցակները և նրանց յեկամտի չափերը:

4) Քննարկել վճարողների դիմումներն ու գանգատները և այդ մասին վճիռներ կայացնել:

5) Քննարկել և հաստատել անհատական կարգով հարկման յենթարկելի կուլակային տնտեսությունների ցուցակները և վորոշել նրանց յեկամտի չափերը:

26. Ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհրդները և յերկրային ու մարդային գործադիր կոմիտեները, տեղական պայմաններին նայած, կարող են գյուղական հարկային հանձնաժողովի պարտականություններն ամբողջովին կամ մասնակի կերպով դնել ռայոնական հարկային հանձնաժողովներին վրա:

27. Քաղաքային այն վայրերում, ուր անցկացվում է միասնական գյուղատնտեսական հարկումը, քաղաքային խորհրդներին առընթեր և քաղաքային խորհրդի պրեզիդիումի նախագահի կամ անդամի նախագահությամբ կազմվում են միասնական գյուղատնտեսական հարկային հանձնաժողովներ, վորի կազմի մեջ մտնում են՝ ա) համապատասխան ֆինանսական բաժնի, բ) կոմունալ տնտեսության որ-

գանի, դ) պրոֆեսիոնալ միավորումի և դ) կոլխոզական միավորումի ներկայացուցիչները:

28. Գյուղատնտեսական միասնական հարկի քաղաքային հանձնաժողովների վրա դրվում են նույն պարտականութիւնները, վորոնք ներկա վորոշումով նախատեսված են ռայոնական հարկային հանձնաժողովների համար:

29. Ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեներին առընթեր կազմվում են գյուղատնտեսական կամ միասնական հարկային հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ մտնում են՝ ա) ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդների կամ յերկրային, մարզային գործադիր կոմիտեների կողմից նշանակված նախագահը, բ) մի-մի ներկայացուցիչ՝ համապատասխան ֆինանսական, հողային, պլանային-վիճակագրական որգանների և պրոֆեսիոնալ միավորումների կողմից, գ) կոլխոզային միավորման ներկայացուցիչը:

30. Նախընթաց հոգվածում հիշատակված հանձնաժողովները պարտական են նախապես քննարկել և ներկայացնել ըստ պատկանելութեան ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդների և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեների դուրս բերած վորոշումների համապատասխան պրոեկտները. ա) դաշտագործութիւնից ստացված յեկամուտների հաշվարկման մասին (հոգված 42). բ) յեկամուտի առանձին աղբյուրների յեկամտաբերութեան նորմաները սահմանելու մասին (կանոն. 35-րդ հոդված). գ) գյուղատնտեսական սպեցիալ ճյուղերից ստացված յեկամուտները հարկման յենթարկելու մասին (կանոն. 28-րդ հոդ.). դ) կուլակային տնտեսութիւնների հատկանիշները սահմանելու մասին (կանոն. 80-րդ հոդ.)..

յե) բրնձի ցանքերի յեկամուտներն արտոնյալ հարկման յենթարկվող ռայոնների ցուցակները սահմանելու մասին (կան. 12-րդ հոդ.). զ) ցանքի, մշակման և բերքահավաքի արտադրական առաջադրանքները կատարող կոլխոզիկներից ստացվելու հարկի զեղջի չափը սահմանելու մասին (կանոն. 13-րդ հոդ.). ը) վորսորդութեան արհեստի արդյունաբերական զարգացման ռայոնները սահմանելու մասին (28-րդ հոդ.). թ) արդյունաբերական յուղագործութեան ռայոնները սահմանելու նախին (58-րդ հոդ.). ժ) հարկի վճարման ժամկետները սահմանելու մասին (77-րդ հոդ.):

31. Ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդները և յերկրային ու մարզային գործադիր կոմիտեները պարտավոր են սխտեմատիկ հսկողութիւն սահմանել, վորպեսզի գյուղատնտեսական միասնահարկի կանոնադրով և այս վորոշումով նախատեսված արտոնութիւնները լիովին և իր ժամանակին կիրառվեն. այլ և պարտավոր են ապահովել կուլակային տնտեսութիւնների լիովին հայտաբերումը և նրանց անհատական կարգով հարկումը, միջոցներ ձեռք առնել գյուղատնտեսական հարկի յենթակա յեկամուտների աղբյուրներն ու չափերը լիովին հայտաբերելու համար. անցկացնել մասսայական հասարակական աղիտկամպանիա՝ միասնական գյուղատնտեսական հարկը բնակչութեանը պարզաբանելու համար, միաժամանակ ապահովելով խորհրդային վարի ապարատի և կոլխոզային վարչութիւնների հրահանգումը՝ գյուղատնտեսական հարկը գործնականապես անցկացնելու մասին:

32. Ի կատարումն ներկա վորոշումների, ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային, մարզային և ռայոնական գործադիր

կոմիտեներն իրենց վորոշումները պետք է հրատարակեն և՛ հրապարակեն 1931 թվի ապրիլի 10-ից վոչ ուշ:

ՌԵՍԽԶ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի
նախագահ՝ Դ. ՍՈՒԼԻՄՈՎ

ՌԵՍԽԶ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի յեվ
Նկոնոմիկական խորհրդի կառավարիչ՝
ԳԵՐԱՍԻՄՈՎ

1931 թ. ապրիլի 5, Մոսկվա, Կրեմլ:

Հրատարակված է «Известия ЦИК СССР и ВЦИК»
լրագրի № 96-ում, 1931 թ. ապրիլի 7-ին:

Име. №

Уполкрайлит № А 2958. Ростов на Дону

газ.-кн. тип. СККП Ст.-ф. Б 6 125x176 Зан. № 2832. Тираж 1200

31. Բոստանջյան. — Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները 10 »
32. Կաթիրով. — Բուլղերիկյան յերկրորդ գարնան մարտական խնդիրները 5 »
33. Վոսկանյան — 1931 թ. գարնանացանի կամպանիայի գործնական խնդիրները 5 »
34. Նոր կենցաղի յերգեր 20 »
35. Սոսո Լուսինց. — Բանաստեղծություններ 20 »
36. Լ. Չաօչարին. — Հացահատիկի ֆարքիկա («Գիւղան») սովորի մասին 10 »
37. Ա. Ա. Անդրեյեվ. — Կոլտուրական շինարարության խնդիրները 7 »
38. Պ. Յալցեվ. — Գալերի վոճմակը, պիեսա 3 գոր. 25 »
39. Վ. Ծովյան. — Համկոմկուսի (ք) 54-ի և 54Ն 1930 թ. դեկտեմբերյան պլենումի արդյունքները 5 »
40. Գյուղատնտես Լ. Վոսկանյան — Գյուղատնտեսության վստաստունները Հյուսիսային Կովկասում և նրանց դեմ կովկաս գլխավոր միջոցները 15 »
41. Ռ. Վիլաման. — Միլիոնները վառքի հանքեր բյուրոկրատիզմի դեմ պայքարելու 15 »
42. Ա. Յակովլև. — Կոլտոգային շինարարության մասին 15 »
43. Ս. Մայսեյն. — Կոլտոգը լեռներում 10 »
44. Յե. Ույուսին — Կոլտոգային շարժումը և պայքարը կրոնի դեմ 15 »
45. Ա. Մ. Մալցեվ. — Բերքահավաքման մեքենաների ստուգումը և խնամքը 12 »
46. Մ. Գիգոյան — Կազմակերպիչները բերքահավաք 8 »
47. Պ. Ռիսակով. — Ընդդեմ խեղաթյուրումների և խռոտումների կոլտոգային արարության ասպարիզում 15 »
48. Գրոյնարական փորձը դեպի կոլտոգային դաշտերը 12 »
49. Ի. Մալին — Նոր պայմաններ — տնտեսական շինարարության նոր խնդիրներ 12 »
50. Մ. Ազարև. — Գյուղատնտեսական հարկի որենքը դեպի մասսաները 20 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հալի. պրոլետարիատի ասոցիացիայի անդամները գլխավորները
 2. 16-րդ կուսհամագումարի արդյունքները
 3. Հյուսիսային Կովկասի հնգամյակը. — արդյունաբերություն:
 4. Խոգարություն կազմակերպումը կոլտոգում:
 5. Կերի հարցը և սերտացումը:
 6. Կենդանարություն ավագ բանվորների պարտականությունները.
 7. Ձեռնարկ ձխախոտագործության համար:
 8. Ճապարակություն:
 9. Թոշարություն:
 10. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամականների բաժանումը կոլտոգում: Լավագույն կոլտոգների փորձը Հյուս. Կովկասում:
 1. Տրանսպորտը և հալսիչը, տեխնիկական ձեռնարկ:
 12. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները:
- «Իմնի» Ростов н-Д Буденовский пр., 60, «Крайнациздат».

9-12-33 в 20 ч. 40 м.

47815

Арм.
х. л. о.
2-328



НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АЗАРХ

**Сельхозналог 1931 г.
— в массы**

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.
К Р А Й Н А Ц И З Д А Т

H | Apr

| 2-328/a

